№ 69 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 4 ԱՊՐԻԼԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 4 ԱՊՐԻԼԻ № 69

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ
ՄՈՒՍԱԲԷԿ ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳԷՕԶԵԱՆԻ
այրին և զաւակները յայտնում են իրանց խորին շնորհակալութիւնը այն բոլոր բարեկամներին և անձանց, որոնք բարեհաճեցին անձամբ, հեռագրներով և նամակներով յարգել հանգուցեալի յիշատակը։ 218. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ. ԸՆԿ. ԽՈՐՀՈՒՐԴԸ
յայտնում է, որ հանգուցեալ դրամատուրգ Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ
„ՊԷՊՕ"
պիէսի ներկայացման իրաւունքը պէտք է վերցնել Ընկ. Խորհրդից։
Հասցէն՝ Абасъ-Абадская пл., 7.
առ. 220. 1—1

Լոյս է տեսել և վաճառվում է
Կ. Հ. Բ. Ընկ. ԱԼ. ՊՕՂՈՍԵԱՆ ՖՕՆԴԻ արդիւնքով հրատարակված
„Գարնանային ջրեր"
վէպը, Ի. Ս. Տուրգենևի,
Թարգմ. Լ. Դանիէլեանի
Գինն է 35 կոպ.
Գումարով գնողներին զեղչ։
(ու.ե.) առ. 221. 3—1

ԵՐԲ ՊԷՏՔ Է ԻՐԱԳՈՐԾՎԻ

Մենք մի քանի անգամ հրաւիրել էինք մեր հասարակութեան ուշադրութիւնը դէպի Սևանայ լճի ներքին հաղորդակցութեան խնդիրը և քննութեան առարկայ դարձրել շոգենաւային երթևեկութիւն կազմակերպելու ձեռնարկութիւնը։

Մարդիկ հետաքրքրվում էին, խորհրդակցութիւններ էին անում, նոյն իսկ դիմումներ էին կազմում մեզ պարզելու այս կամ այն մանրամասնութիւնը և ձևական պահանջները։ Եւ մենք կարծում էինք՝ թէ մարդիկ եռանդով գործի են կպել և շուտով մի բան կիրագործեն։

Սակայն անցնում էին տարիներ մէկը միւսի ետևից և չէինք տեսնում դրական ոչ մի գործ ասպարէզում։

Շոգենաւային հաղորդակցութիւնը կարող էր ձեռնտու լինել և որոշ շահ տալ նախաձեռնողներին. բայց վերջիններս չը գտնվեցին մեր իրականութեան մէջ։

Այնպիսի մի խոշոր լեռնային լիճ, ինչպէս Սևանայ լիճն է, եթէ լինէր նա Եւրոպայում, վաղուց և շատ վաղուց շոգենաւեր ունեցած կը լինէր, և առաջին աչքի փորձը հանդէս բերած կը լինէր հաղորդակցութեան ընդարձակ զարգացում, գրաւելով միևնոյն ժամանակ շատերին՝ օգտվելու լեռնային գեղեցիկ ափերից ամարանոցներ շինելու և առողջարար ամարանոցային կեանք ստեղծելու։

Այժմ, ինչպէս լսում ենք, պետական շրջաններում շահագրգռված են այդ խնդրով և դիտաւորութիւն կայ մերձաւոր ապագայում ունենալ մի փոքրիկ շոգենաւ։ Նա գուցէ դեռ չը ծառայի հաղորդակցութեան ընդարձակ նպատակներին, բայց նա գեղեցիկ օրինակ կը լինի, որ ուրիշ նախաձեռնողներ կազմակերպէին գործը հաղորդակցութեան և ապրանքների փոխադրութեան ընդարձակ նպատակների համար։

Դանդաղկոտութիւնը և նախաձեռնութեան պակասութիւնը մեռցրել են շատ ձեռնարկութիւններ իրանց հիմքում։

Ամբողջ երեսուն տարի է խօսվում է Սևանայ լճի շոգենաւային հաղորդակցութեան մասին և մինչև այժմ ոչինչ չիրագործվեց։

Եթէ դանդաղաշարժութիւնը նոյնպէս մրցանակի առարկայ լինէր, երևի մեր հասարակութիւնը առաջնակարգ տեղերից մէկը կը գրաւէր այդ մրցութեան մէջ։

Ցաւ է այդ արձանագրել. բայց իրականութիւնը մեզ դրել է անմխիթարական երևոյթների առաջ, որոնց պատճառը նախաձեռնութեան ոգու բացակայութիւնն է մեզանում։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 ապրիլի

Պետերբուրգ.—Պաշտօնական։ Բարձրագոյն ռեսկրիպտ, տրված յանուն Պետական Խորհրդի անդամ ստատս սեկրետար, սենատոր, իսկական գաղտնի խորհրդական Դուրնովոյի.

Պետր Նիկոլայեվիչ.

Առ Գահը հաւատարիմ հպատակութեամբ և առ հայրենիքը սիրով ներշնչված ձեր երկարատև ծառայութեան մեծ մասը ընթացաւ ներքին գործերի մինիստրութեան մէջ։

Ի նկատի ունենալով այն բացառիկ եռանդն ու աչքի ընկնող յատկութիւնները, որ ցոյց տուիք դուք այդ մինիստրութեան բարձր պաշտօնները վարելու ժամանակ, Ես 1905 թ. ձեզ վստահացի ներքին գործերի մինիստրի պաշտօնը։ Արթուն հսկելով հասարակական հանգստութեան և կարգ ու կանոնի վրա խռովութեան ծանր տարիներում, դուք խորին համոզմունքով ու ժամանակի պահանջների համապատասխան վճռական միջոցներով գնահատելի ծառայութիւններ մատուցիք կեանքի խաղաղ ընթացքը վերականգնելու գործում։

Ձեր գործունէութեան յետագայ տարիները, լի պետական օգտակար և լուսամիտ ձգտումներով, դուք նուիրեցիք ջանասէր պարապմունքներին Պետական Խորհրդում։

Ձեր գործունէութեան կիսադարեան տարելիցի այսօրվայ օրը, Ես առանձին ուշադրութեամբ դէպի ձեր բազմամեայ նշանաւոր աշխատանքները՝ շնորհում եմ առաջին կարգի Վլադիմիրի շքանշան, որի նշանները ընդ սմին առաքվում են ձեզ։

Մնում եմ առ ձեզ մշտապէս շնորհակալ՝

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրված է՝

«Անկեղծ երախտիքով՝ ՆԻԿՈԼԱՅ»

—

Պետերբուրգ.—Մարմարեայ պալատի եկեղեցում Շտուտգարտում Մեծ Իշխանուհի Վէրա Կոնստանդինօվնայի թաղման օրը կատարվեց հոգեհանգիստ։ Ներկայ էին այրի Մայր Թագուհին, Մեծ Իշխանները և Իշխանուհիները, պալատական կանայք, Կայսրուհու շքախմբի անձինք, պալատի պաշտօնեաները, սերբիական միսսիայի ներկայացուցիչները և այլն։

Շտուտգարտ.—Մեծ Իշխանուհի Վէրա Կոնստանդինօվնայի մարմնի տեղափոխութիւնը պալատից կատարվեց երեկոյեան։ Փողոցները լի են։

Եկաւ Մեծ Իշխան Կոնստանդին Կոնստանդինօվիչը։ Կայարանից Նորին Բարձրութիւնը Թագաւորի հետ մեկնեց պալատ։

Կէսօրին տեղի ունեցաւ Մեծ Իշխանուհու հանդիսաւոր թաղումը։ Բազմաթիւ ամբոխը շրջապատել էր պալատական հրապարակը զօրքերի հետ միասին։ Պալատի առաջ ժողովվեցին թագաւորական գերդաստանի անդամները, օտարազգի կառավարութիւնների ներկայացուցիչները, դիպլոմատիական մարմինը, մինիստրները։

—

Ստոկհոլմ.—Ռուսաց եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ Մեծ Իշխանուհի Վէրա Կոնստանդինօվնայի համար։ Ներկայ էին ռուսական դեսպանը և դեսպանատան պաշտօնեաները։

—

Մոսկվա.—Եկաւ ստատս սեկրետար Կոկովցեվը և ընդունվեց իշխանութեան ներկայացուցիչներից և ֆինանսների մինիստրութեան հաստատութիւնների կառավարիչներից։

—

Պետերբուրգ. — Մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչ հոֆմէյստէր Բէլգարդտ նշանակվեց ներկայ լինել սենատում՝ մնալով հոֆմէյստէր։

—

Հռոմ.—Օդային նաւատորմի համար ազգային հանգանակութիւնը Իտալիայում ընդունվեց խանդավառութեամբ։ Ամենուրեք կազմակերպվում են հանգանակիչ յանձնաժողովներ։ Խոշոր քաղաքները որոշումներ են կայացնում իրանց հաշւով աէրօպլաններ կառուցանելու։ Ենթադրվում է, որ աէրօպլանների թիւը կը լինի 50։ Նրանք կրելու են քաղաքների անունները։

«Տրիբունան» խօսելով ուրմիական հարցի մասին, ասում է. «Թիւրքիայի համարձակ գործելակերպի պատճառով դրութիւնը աւելի լուրջ է դառնում։ Ռուսաց կառավարութիւնը ձեռք է առնում իր միջոցները։ Թիւրքիան վերջերս փութաց հանգստացնելու Պետերբուրգին՝ յայտնելով, թէ զօրքերը յետ են քաշված սահմանից. սակայն դրա փոխարէն Տրապիզոն և Էրզրում է փոխադրել մեծ քանակութեամբ ռազմամթերք, առաջ է շարժել 15 հազարանոց զօրաբանակ Էրզրումից դէպի սահմանը և պատրաստվում է ամրացնել Ուրմիայի շրջակայքը։ Դրութիւնը փափկանկատ է։ Երկու կողմերի զօրքերը կանգնած են շարքով։ Թիւրքիայի գործելակերպը սովորական է այդ երկրի և այն պետական մարդկանց համար, որոնք կանգնած են այնտեղ կառավարութեան գլուխ։

Թագաւորական զոյգի ներկայութեամբ հանդիսաւորապէս Կապիտոլիումում բացվեց Թոքախտի դէմ կռւող եօթերորդ կոնգրէսը։ Եկել են 4,000 հիւր աշխարհի զանազան մասերից։

Ստեֆանիին Մազարէսից Թունիսանթել հեռագրով տեղեկացնում են, որ ասկէրների մի զօրամաս ցրեց Բուշամէց բերդի աշխատանքները խոչընդոտող եղող արաբներին։ Վիրաւորված են եօթ ասկէրներ։ Օազիսում շարունակում են բերդեր կառուցանել։

—

Միւնխէն. — Մինիստր-նախագահը ռուսաց հաւատարմատարին յայտնեց կառավարութեան խորին ցաւակցութիւնը դեսպանի մահվան առիթով։

Պրինց-խնամակալը հրամայեց պսակ դնել բարօն Կորֆի դագաղի վրա։

—

Բեռլին.— Րէյխստագին ներկայացվեցին նոր օրինագծեր պետական ինքնապաշտպանութեան մասին և լրացուցիչ բիւջետային նախագիծ։ Նախագծված է սաորջրեայ նաւերի թիւը հասցնել 72-ի։

—

Կալկաթա.—Արևելեան Աւղանստանում բռնկվել է ապստամբութիւն նահանգապետի ճնշումների պատճառով։ Զօրքերը բազմաթիւ ընդհարումների մէջ պարտութիւն են կրել։ Ապստամբները շրջապատել են նահանգապետին։

—

Վիէննա.—«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Բէլգրադից, որ ստացված տեղեկութիւնների համաձայն ընտրվել են 78 հին արմատական, 36 երիտասարդ արմատական, 8 արմատական-դիսիդէնտ, 32 ազգային-առաջադիմական, 2 սօցիալ-դեմօկրատ. 10 հոգի ենթարկվելու են կրկնաքուէարկութեան։

—

Բռնօ.—Մօրավիայի չեխական կուսակցութիւնները կազմակերպեցին 3000 մարդուց բաղկացած բողոքի միտինգ ընդդէմ Խօրվատիայում սահմանադրական երաշխաւորութիւնների վերացման։ Ընդունված բանաձևով սլաւօն բոլոր պատգամաւորները հրաւիրվում են ամեն հնարաւորը գործ դնել յօգուտ Խօրվատիայի։

—

Սպլէտ.—Դալմացիայի պատգամաւորները կազմեցին բողոքի միտինգ Խօրվատիայում սահմանադրական երաշխաւորութիւնները վերացնելու և կառավարական կոմիսար նշանակելու դէմ։ Վճռված է նշանակել գործադիր կոմիտէտ ընդհանուր գործողութիւնների համար։

—

Պարիզ.—Բրիսսօնի թաղումը կրելու է քաղաքացիական բնաւորութիւն։

Պալատի նախագահի պաշտօնի համար յարմար թեկնածու են համարում Էտիէնին, Դէշանէլին և Դէկասէին։ Ամենալուրջը Էտիէնի թեկնածութիւնն է։

—

Լոնդօն.—«Էկսչէնջը» հաղորդում է, որ Վաշինգտօնում ամենքը հաւատացած են, թէ Ամերիկայի միջամտութիւնը մեքսիկական գործերին տեղի կունենայ 36 ժամվայ ընթացքում։ Հնարաւոր է, որ 10,000 ամերիկական զինուոր 48 ժամվայ ընթացքում պատրաստվեն արշաւելու դէպի Մեքսիկա։

—

Փիլադէլֆիա.—Պէնսիլվանիայում առաջին ընտրութիւններին Ռուզվէլտը յաղթեց Տաֆտին։ Ընտրված են նրա 50 կողմնակից՝ ընդհանուր 64 պատգամաւորներից։

—

Բէլգրադ.—166 պատգամաւորներից ընտրված են 87 հին արմատական, 37 երիտասարդ-արմատական, 29 լիբէրալ, 2 սօցիալ-դեմօկրատ։

—

Մուկդէն. — Գեներալ-նահանգապետը կառավարութեանը զեկուցագիր ներկայացրեց՝ հաստատելու ռուս-չինական սահմանագլխին սահմանային կոմիսարի պաշտօն։

Չինական տեղեկութիւնների համաձայն՝ Մուկդէն է եկել կայսրուհու կողմից գաղտնի մի գործակալ անվախների գործունէութեան հետ ծանօթանալու և Պեկինից անյայտացած Ցզայցզէի որտեղ գտնվելը պարզելու համար։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 ապրիլի

Ուրմիա. — Սօվուջ-Բուլաղից հաղորդում են, որ ընդհարում է սպասվում Սամադ-խանի գործակից Ղազի-Ֆէտահի և քիւրդական ազդեցիկ պարագլուխ Հաջի-Էլխանիի միջև։ Թիւրքաց հիւպատոսը աշխատում է հաշտեցնել նրանց, համոզելով որ ընդհարումը կարող է առաջ բերել Ռուսաստանի միջամտութիւնը, որից պէտք է խուսափէ ամեն մի ուղղափառ մահմէդական։

—

Խօյ.—Եկաւ ռուսաց զօրքերի գալստեան օրից չորրորդ նոր նահանգապետ Էմիր-Ամջէդը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Մէշէդ, 20 մարտի

Ռուսաց զօրքը շարունակում է մնալ Իմամ-Րիզայի բաստում։ Դրութիւնը քաղաքում խաղաղ է երևում, բայց ներքուստ կարծես մի դիւային ծրագիր է ծրագրվում քրիստոնեաների դէմ....

Ռուսաց կողմից յայտարարվել է, որ զէնքերը ամբողջովին յանձնեն իրանց։ Խանութները կիսաբաց են։ Առևտուր բնաւ չը կայ։ Խանութպաններից ներկայացել են ռուսաց հիւպատոսարանին և նրանից իրանց թալանված ապրանքների վնասն են պահանջում։

Քրիստոնեաները կատարեալ ազատ մուտք ունեն Իմամ-Րիզայի բաստը։ Խումբ-խումբ շարունակում են ամեն օր գնալ-գալ։ Սակայն այստեղ աւելորդ չը համարելով թոյլ ենք տալիս մեզ նկատել, որ այդ քայլը ապագայում օգտաբեր հետևանք չէ կարող բերել ընդհանրապէս քրիստոնեաների համար Խօրասանում....

Խնդիրն այստեղ շատ պարզ է։ Երբ 870 տարի քրիստոնեայ մարդ ոտք չէ դրել այդ սրբավայրում և չափազանց խիստ արգելված է եղել նրանց առաջ, ապա ինչ անուն են տալիս այսօր մուտք ունենալուն՝ ֆանատիկոս պարսիկի սրբավայրը, այն էլ այնպիսի մի սրբավայր, ուր թաղված է պարսիկի հոգին՝ Իմամը։ Մեր խօսքը ի հարկէ չէ վերաբերում զօրքին։ Զօրքը մտել է այնտեղ, որպէս զի բռնէ Իւսուֆ-խան Հերաթցուն և խաղաղեցնի քաղաքը։ Իսկ ինչու են մտնում այլ մարդիկ, երբ ոչ մի գործ չունեն,—ասում է ինձ մի ծանօթ պարսիկ։

Այսպիսի հանգամանքներում պէտք է իւրաքանչիւր քայլափոխում զգոյշ լինել և չը գրգռել առանց այն էլ գրգռված պարսիկի հոգեկան ֆանատիկոսութիւնը։ Պատմում են, որ Իմամ-Րիզային պատկանել բոլոր կայքը թալանված է։ Սակայն պարզ չէ, թէ այդ թալանը Իւսուֆ-խանի կողմից է կատարվել թէ ուրիշի։ Սակայն շատերը պնդում են, որ թալանը կատարելապէս կատարվել է Իւսուֆ-խանի կողմից։

Այսօր անգլիական հիւպատոսը ռուսաց հիւպատոսի հետ միասին գնաց բաստը, սակայն որոշ չը կարողացայ իմանալ նրանց գնալու իսկական պատճառը։ Արժանահաւատ տեղից իմացայ, որ Իւսուֆ-խանը դիմել է փախուստի հէնց այն ժամանակ, երբ առաջին անգամ որոտացել է ռուսաց թնդանօթը դէպի բաստը։ Նրա ուր փախչելու մասին առ այժմ ոչ ոք տեղեկութիւն չունի։

Այսօր բռնված են Իւսուֆ-խանի մարդիկը, որոնք թաքնված են եղել բաստի գաղտնի սենեակներում. միաժամանակ բռնված են Իւսուֆ-խանի կինը և երեխան։ Նաւից յետոյ՝ բաստում բռնված են շատ մարդիկ, որոնք մասնակցել են Իւսուֆ-խանին. Նոյնպէս բռնված է մի մուջտէհիդ։ Այսօր երեկոյեան բոլոր բռնվածներին բաստից տեղափոխեցին արքը, ուր գտնվում է ռուսաց զօրքը ամբողջովին։

21 մարտի

Այսօր բաստը ռուսների կողմից յանձնըվում է պարսիկներին միայն այս պայմանով, որ զօրքը կը մնայ բաստում, միայն առանց մուտք ունենալու այնտեղ, ուր թաղված է Իմամ-Րիզան։

Կրօնական բոլոր հոգով յուզված է ամբողջ ժողովուրդը։ Դրութիւնը չափազանց վտանգաւոր է։ Ապագայում գալիք վտանգների մասին որոշ խօսք ասել չափազանց դժուար է։ Այսօր բազարում յարձակվել են մի հայի վրա, որպէսզի սպանեն, սակայն ռուսաց զինուորների օգնութիւնը ազատել է անմեղ զոհին։ Դէպքի մասին տեղեկացրել են ռուսաց հիւպատոսարանին։

22 մարտի

Քաղաքը տակաւին մնում է հանգիստ։ Բազարը քիչ-քիչ սկսել են բանալ։ Բաստը պարսիկներին յանձնելուց յետոյ՝ ժողովուրդը շարունակում է մուտք ունենալ այնտեղ։ Ռուսաց զինուորները մնում են բաստի սահմանում, միայն առանց մուտք ունենալու Իմամի գերեզմանատունը։

Տեղական նայիբէն այսօրվանից ձեռնարկել է իր ույժերը վերականգնել։ Նոր ույժեր է հրաւիրում, գլուխ կանգնելու նոր կառավարութեան այն հաստատութիւնների վրա, որ քարուքանդ էր արել Իւսուֆ-խան Հերաթցին։ Սակայն նայիբէն բոլորովին կորցրել է իր ազդեցութիւնը ժողովրդի աչքում։ Նայիբէի գոյութիւնը զերօյի հաւասար է ժողովրդի համար։

Նահանգապետ Ռուքնը-Դօվլէի բռնած դիրքը կատարեալ հանելուկ է մնում բոլորի համար. որպէս լսեցի, նա գրեթէ չէզոք է մնացել վերջին դէպքերին խառնվելուց։ Ինչպէս ասում են, նա, Ռուքնը-Դօվլէն, պիտի պաշտօնանկ լինի և ընդմիշտ հեռանայ Խօրասանի սահմաններից։ Կրօնական յուզմունքը շարունակվում է։

Արժանահաւատ տեղից իմացայ, որ ժողովուրդը հեռագրով սրբազան պատերազմ է խնդրել Նէջէֆի մեծ մուջտէհիդից քրիստոնեաների դէմ։

Բալ. Խաչատրեան

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՊՈԼՍԱՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Օսմանեան խորհրդարանի հայ անդամներու ընտրութեան առթիւ կազմուած յանձնաժողովը իր նիստերը կը շարունակէ։ Շաբաթ օրուան խորհրդակցութենէ վերջ դիմում մը եղաւ Իթթիհատին մօտ, պատգամաւորութեան մը միջոցաւ, և հաւաստիք տրուեցաւ, թէ հայերը պիտի կրնան 15 երեսփոխան տալ։ Երեսփոխանութեան ընտրելիներուն առնուազն 10-ը դաշնակցական կամ անոնց ծրագիրը ընդունողներէն ներկայացուած են. անդին կը մնան 5 ընտրելիներ, որոնց երկուքին Իթթիհատը արդէն կը պաշտպանէ, և միւս երեքին ալ ընտրութիւնը կամ տարակուսական է կամ ո՛վ է ընտրուելիքը, յայտնի չէ։ Մինաս էֆէնդի Զերազի ընտրելիութիւնը գրուելիք տեղ մը չէ գտներ, որովհետև Պոլիսէն մինչև Վասպուրական բոլոր հայ երեսփոխան տալու հաւանական վայրերը Դաշնակցութիւնը սեփականած է իրեն, ընդ պաշտպանութեամբ Իթթիհատի, և հիմա կը մտածուի եղեր չէզոք հայ երեսփոխան մը հրաժարեցնել՝ անոր տեղ Զերազ էֆ.-ի թեկնածութիւնը դնելու համար։ Եւ տակաւին կը գտնուին մարդիկ, իրենց գլուխն ունենալով սրբազան պատրիարքը, որ կը հաւատան, թէ կեդրոնը «ապիկարացաւ»։ Շատ ճիշդ է այս խօսքը միայն այն իմաստով, որ կեդրոնը և չէզոքներ ամեն զոհողութիւն ըրին, եթէ կուզէք՝ ապիկարացան ալ ազատ ասպարէզ ձգելով, և դեռ աթոռ մըն ալ իրենցմէ զոհել կը պահանջուի Զերազ էֆ.-ի ընտրութիւնը յաջողցնելու համար, երբ գուցէ միակ աթոռն է այդ՝ չէզոքներուն կամ կեդրոնին ձեռքը մնացած։

◆ Կեդրոնի խմբակցութեան կողմէ երէկ պաշտօնապէս խզում հռչակուեցաւ։ Հակառակ Դաշնակցութեան վարիչ մարմնոյն կողմէ Վահան Փափազեան և Վռամեան էֆ.-ներու ստորագրած պրօտօկոլին, թէ Զերազ էֆ.-ն անպայման մերուս պիտի ընտրուի, երէկ պաշտօնապէս հաղորդեցին, թէ ոեւէ հնարաւորութիւն չկայ, ամեն աթոռ գրաւուած ըլլալով. առաջարկեցին ժողովին կողմէ Յակոբ Պօյաճեան էֆ.-ին դիմում ընել հրաժարելու համար թեկնածութենէ՝ իր աթոռը Զերազ էֆ.-ի տրամադրելու համար։ Այս առաջարկն ալ արդէն խաբկանք մըն էր, քանի որ Իթթիհատը չպիտի ուզէր լքել Պօյաճեան էֆ.-ն։ Կեդրոնը բացարձակապէս մերժեց և պահանջեց, որ եթէ զոհողութիւն մը ընել պէտք է, այդ զոհողութիւնը կրնայ դաշնակցական ընտրելիներուն, քանի որ 13 աթոռին 11-ը գրաւած են նոյն դաշնակցական ընտրելիները։

Կեդրոնը այս արդիւնքէն գոհ է. ազգը պէտք էր գիտնար թէ՝ կեդրոնին մղած պայքարը աթոռի պայքար չէր, և նոյնիսկ Զերազ էֆ.-ն որ կեդրոնի ընտրելին ըլլալէ աւելի ամբողջ ազգին ընտրելին էր, ան իսկ յաջողութիւն չունեցաւ խորհրդարանին անդամակցելու, որովհետև ազգին անուամբ երդուեցողներն ամեն բան կանխաւ իրենց մէջ բաժնած էին։

Կեդրոնին կողմէ ժողովին մէջ պաշտօնապէս յայտարարուեցաւ, թէ քանի որ Զերազ էֆէնդիի ընտրութիւնն անգամ անկարելի դարձած է, իրենց կը մնայ անմիջապէս ամեն յարաբերութիւն խզել և մեկնիլ, նկատելով որ այս ընտրութիւնները ազգային հանգամանք չունին բնաւ, և Դաշնակցութեան ու Իթթիհատի ընտրութիւն կը նկատեն։

Պաշտօնական յայտարարութիւն մը հրատարակուած է «համերաշխական ժողովի» անունով, առանց յիշելու սակայն, թէ կեդրոնը և անկախ երեսփոխանութիւնը բացարձակապէս ձեռնպահ մնացած են։ Կեդրոնի և չէզոքներու շրջանակին մէջ մտադրութիւն կայ պաշտօնական մարմիններու հանրագրութեամբ պահանջ դնել պատրիարքին վրայ, որպէս զի Պոլսոյ երեսփոխաններէն մին անպայման Զերազ էֆ.-ն ըլլալու մասին դիմում ընէ պատկանեալ իշխանութեան, քանի որ արդէն իսկ Իթթիհատական իշխանութիւնն է որ ընտրութիւնները կը վարէ։

◆ Միւնթէխիպի սանիներու ընտրութեան մէջ հայերը չէզոք դիրք բռնել որոշած են, տեսնելով որ Զերազ էֆ.-ի ընտրութիւնն անգամ կը ձախողի։ Եւ Պոլսոյ գրեթէ բոլոր թաղերուն մէջ քուէատուփերը կը փակուին, ուր շատ չնչին թիւով քուէ ունին հայերը, այն ալ իրենց փափագին հասած կուսակցականներ միայն։

◆ Ազգ. ժողովին, անկախ՝ երեսփոխանութեան կողմէ, Արիստակէս էֆ. Գասպարեան և Պարգև էֆ. Փափազեան ալ, որ պաշտօնապէս կը մասնակցէին համերաշխական մարմնին՝ խզում հռչակեցին։

◆ Էջմիածնայ սինօդին պաշտօնապէս պատրիարքարան հաղորդուած ըլլալով Ամենայն Հայոց Հայրապետին պաշտօնին վաւերացումը, Զատկի առթիւ եկեղեցիներու մէջ չկրցաւ յիշատակուիլ նորընտիր կաթողիկոսին անունը։ Սակայն պատրիարքը Զատկի առթիւ շնորհաւորական հեռագիր մը ուղղած ըլլալով՝ Սուրէնեանց հետևեալ պատասխանն ուղղած է, կաթողիկոսական տեղակալի ստորագրութեամբ. «Փոխադարձ շնորհաւորութիւններ. Վեհափառ Կայսրն Ռուսիոյ հաճեցաւ հաստատել ընտրութիւնս. պաշտօնական հրամանագիրն կը սպասուի»։

Հայրապետական վաւերացման կայսերական հրամանը գրաւորապէս կը հաղորդուի փոխարքային և անկէ ալ ի Մայր Աթոռ։ Հեռագրական տեղեկութիւններն անպաշտօն լուրեր են, ու մինչև որ պաշտօնական հեռագիրը չստացուի, սինօդը չի կրնար լուրն հաղորդել պատրիարքարան և տրուել յիշատակութեան հրահանգը։ Կաթողիկոսին օծումը կատարել որոշուած է մայիսի 3-ի Համբարձման տօնին օրը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԴՈԴՕԽԵԱՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՆՏԻՊ ԵՐԳԵՐԸ

Հայ գրական շրջաններին քաջ յայտնի է, որ «Ծիծեռնակի» հեղինակը չէր համաձայնվում իր կենդանութեան ժամանակ մամուլին յանձնել վաթսուն տարիների ընթացքում իր հեղինակած ոտանաւորները, չը նայելով հայ պարբերական թերթերի ներկայացուցիչների և իր բարեկամների կողմից արված դիմումներին։

Ես ևս մի անգամ խնդրել էի Դոդօխեանին ուղարկել իր մուսայի քնարերգութիւնը ըստ իր ընտրութեան «Մշակի» կամ Լևոն Սարգսեանի «Մուրճի» համար, ուր ես այն ժամանակ աշխատակցում էի, բայց բանաստեղծը ինձ համար էլ չը կամեցաւ անել բացառութիւն, ասելով իրան յատուկ համեստութեամբ. «Շատ բան չունեմ գրած, և գրածներիս մէջն էլ չը կայ մի բան, որ ծերացած «Ծիծեռնակիս» փառքին նոր դափնիներ աւելացնէր...»։

Բայց, խորհրդաւոր շեշտով աւելացրեց բանաստեղծը. «Ես որոշեցի մի մեծ ծրարի մէջ ամփոփելով գրածներս կտակել ձեզ, թողնելով ձեր կատարեալ տնօրինութեանը ոտանաւորներիս հրատարակութեան խնդիրը իմ մահից յետոյ»*)։

Ես երկար տարիներ Դոդօխեանի բարեկամութիւնը վայելելու բաղդն եմ ունեցել։

Շիտակութեան, անկեղծութեան և առողջ բանականութեան գծերը զարմանալի զուգակցութեամբ մարմնացել էին այդ մարդու մէջ։ Նա չը գիտէր ոչ շողոքորթել և ոչ քծնել հզօրի առաջ և կեանքի անցաւոր վայելքների համար բնաւ չէր փոխում իր համոզմունքը։ Հոգու անարատութիւնը փրկելով, նա կեղծիքից փախչում էր, ինչպէս մարդ՝ ժանտախտից. բայց բան է, երբ հանդիպում էր այդ վիշապին դէմ առ դէմ, նա չէր նահանջում երկչոտաբար, այլ յարձակվում էր նրա վրա ցասման հրեղէն լեզուով։ Դոդօխեանի կեանքի այդ գեղեցիկ և խրատական մոմենտները կը մնան անջինջ նրա ժամանակակիցների յիշողութեան մէջ։

Առօրեայ կեանքը ցոյց է տալիս, որ հասարակութիւնը կեղծիքի վրա է կրթվում, տալով հոգով աղքատ սերունդներ։ Դոդօխեանը մտրակում էր այդ հասարակութիւնը երգիծաբանի կծու լեզուով, հրապարակ հանելով միջավայրի արմատացած ախտերը և անմիտ բարքերը։ Բայց և այնպէս «Ծիծեռնակի» հեղինակին խորապէս յարգում էին, ընկճվելով նրա հոգու մեծութեան առաջ։ Նա չունէր հակառակորդներ, այլ միայն չարամիտ թշնամիներ, որոնք տաղտուկ՝ լոյսից հեռու մութ անկիւններում՝ բամբասանքի ունայն մարզանքներով էին մխիթարում իրանց դաղված սրտերը....

Դոդօխեանը ունէր սուր և դիտող աչք. Ղրիմի հայերի կեանքից վերցրած զաւեշտական դէպքերը նա գիտէր պատմել երգիծաբանի աննման շնորհքով, որին միշտ հետևում էր լսողի բուռն քրքիջը։

Իր իդէալներով ու աշխարհահայեացքով, իր զգացմունքներով ու ձգտումներով նա կրթված եւրոպացի էր. նրա փոքրիկ մատենադարանի մէջ կարելի էր գտնել բացի հայերէն գրքերից ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն հրատարակութիւններ։

Դոդօխեանի արած գրախօսական դիտողութիւնները մերկացնում էին նրա մէջ նուրբ գեղարուեստական ճաշակ և ըմբռնողութիւն։

Նա խորապէս յարգում էր Գրիգոր Արծրունու անկեղծ ու կտրուկ գրիչը։ Հրապարակախօսի ողբալի մահն ու ժողովրդական սուգը իր ժամանակին ցնցող տպաւորութիւն թողեցին բանաստեղծի վրա, որը նա արտայայտեց հետևեալ սրտառուչ տողերով.

Նուէր Գր. Արծրունու անմահ յիշատակին

Հրապարակախօս՝ անխոնջ, աննման,
Աւաղ, տարաժամ իջար գերեզման,
Ո՞ր կողմը նայես՝ կսկիծ, ողբ ու սուգ.
Ազգդ թափում է առատ արտասուք։

Մտաւոր ռազմի աներկիւղ ասպետ,
Հաւասարութեան սիրոյ վարդապետ,
Անաչառ գործիչ, անկեղծ ազգասէր,
Տառապեալներու միշտ պաշտպան և տէր.

Անկեղծ բարեկամ, դու բարեկամի
Հակառակորդաց ազնիւ թշնամի,
Լոյս գաղափարներ՝ փրկաւէտ, ազնիւ,
Քարոզում էիր դու ազդու բանիւ.

Դու մաքառեցիր քսան ու հինգ տարի
Ընդդէմ չարութեան, ընդդէմ խաւարի՝
Բարձր կրելով, անմոռաց Մշակ,
Լուսաւորութեան սրբազան դրօշակ։

Լացէք, ողբացէք, հայ այր և կանայք,
Ձեզ էր նուիրել Նա իր կեանք ու կայք.
Իջաւ գերեզման պարծանք ազգային,
Աւա՜ղ ու եղո՛ւկ որբացեալ հային։

Չէ, դու չես մեռած, մեր անգին Մշակ.
Անմոռանալի քո լոյս յիշատակ
Ջերմ երախտիքով լի սրտերուս մէջ
Կը փայլի ընդ միշտ պայծառ և անշէջ։

Քեզ փառք և պատիւ այժմ և յաւէտ,
Աստուծով կուգայ օր երանաւէտ
Եւ քո ցանածը, պտուղ բիւրաւոր
Տալով, հայ ազգին կանէ բաղդաւոր։

Դոդօխեանը իր ներքին վերապրումներով մենակ էր կեանքի մէջ և մնաց մենակ մինչև իր արևի վերջալոյսը։

Կան եզակի մարդիկ, որոնց հոգու մէջ կեանքը թողնում է խոր՝ ճակատագրական ակօսներ....

Նրանց համար նեղ և հեղձուցիչ է թւում այս աշխարհը իր սին ու վաղանցուկ վայելքներով և մարդկանց շրջանը իրանց ունայն փառքով ու մանր տենչերով.... Եւ Դոդօխեանը քանի գնում էր՝ աւելի ու աւելի պարփակվում էր իր մէջ, խորասուզվելով իր ներքին աշխարհի մտորումների մէջ։

Ծերութիւնն ու հոգեկան տանջանքները բանաստեղծին հասցրին յուսահատութեան դուռը։

Սև տխրութիւն տիրեց սրտիս,
Ցաւիս չի կայ ճար...
Պիտ տանջուիմ մինչև ի մահ
Այսպէս չարաչար,

Պիտ թափառեմ անմխիթար
Թշուառ, միայնակ,
Մինչ այն օրը, երբ կը թաղեն
Ինձ սև հողի տակ։

Բարբարոս մահ, դէ՛, շուտ արի,
Դիր ցաւերիս վերջ.
Որ խեղճ սիրտս հանգիստ գտնի
Գերեզմանի մէջ։

Դոդօխեանի քոյրը ունէր մի թոռ, Նուշիկ անունով, մի հրեշտականման արարած, որը ծերունազարդ բանաստեղծի հոգեզաւակն էր ու նրա վերջին տարիների միակ մխիթարութիւնը։ Նուշիկի մանկական թոթովանքները շատ էին զբաղեցնում ալեզարդ պապիկին. առաջին խօսքը, որ երեխան արտասանեց, հայերէն էր, և այդ հոգով պապիկը սկսեց կրթել իր սիրասուն Նուշիկին, որի նազիկ հոգու ու սրտի մէջ արդէն ընկել էին բանաստեղծի բարեբեր ազգայնութեան սերմերը։

Նուշիկը մայիսեան վարդի նման բացվում ու զարգանում էր, բայց, աւաղ, կարճ եղաւ այդ չքնաղ երեխայի օրը. անգութ ճակատագիրը խլեց ծերացած ու թշուառացած Դոդօխեանի ձեռքից նրա փայփայած ու սիրով գգված ծաղիկը, հասցնելով պապիկի մորմոքված սրտին վերջին մահաբեր հարուածը....

Տարաժամ դրինք սև հողի տակ,
Իմ անգին Նուշիկ, իմ փոքրիկ հրեշտակ,
Գարնան ծաղկի պէս քնքոյշ բացվեցար
Եւ ծաղկի պէս էլ շուտ թառամեցար։

Երբ գայ նոր գարուն, աշխարհ կը զարթի,
Կը ծաղկի թուփը աննման վարդի,
Կը գան ծիծեռնակ, կռունկ և սարեակ,
Սակայն չես զարթնիլ, աւաղ, դու հոգեակ։

Շիրմիդ վերայ կուգամ միշտ լալու
Անդարձ կորուստս դառն ողբալու,
Իսկ երբ որ դրվի օրհասս վախճան՝
Քո կողքիդ կը լինի և իմ գերեզման։

Եւ այդ օրվանից խեղճ, ապերջանիկ Նուշիկի թարմ հողաթումբը Դոդօխեանի ուխտագնացութեան տեղը դարձաւ. վշտից և ծերութիւնից կռացած «Ծիծեռնակի» հեղինակը՝ փայտը ձեռին, դողդոջուն քայլերով ու արտասուքով լի աչքերով մօտենում էր նուիրական գերեզմանին և ընկնում վրան ինքնամոռացութեան մէջ, իսկ հեռուից դիտող հանգստարանի պահապանը, որ միակ վկան էր լինում այդ ողբերգական տեսարանին, գլուխը շարժելով կարեկցաբար «մխ» էր քաշում անմխիթար Դոդօխեանի վշտին....

Երկար չը քաշեց նրա հոգեկան վիշտը։ 1908 թ. յունիսի 7-ին Դոդօխեանը կնքեց իր մահկանացուն 78 տարեկան հասակում և թաղվեց իր ողբացեալ Նուշիկի կողքին։

Սրտի մուրազը կատարվեց....

Այսպէս վերջացաւ Դոդօխեանի կեանքը, որի մահվամբ գերեզման իջաւ 50—60-ական թւականների հայ ազգային ռոմանտիզմի վերջին մոհիկանը։

⁂

Մինչև այժմ Դոդօխեանի գերեզմանը չունի յուշարձան։ Այդ բարոյական պարտքը պիտի սիրով յանձն առնէ Սիմֆերոպոլի և Ղրիմի այլ հայաբնակ քաղաքների հայ ժողովուրդը, որի ազգային գիտակցութեան և պարտաճանաչութեան մեծապէս նպաստել է Դոդօխեանի քնարի հմայքը և նրա անձնական առաքինութիւնը։

Բացի փայլուն յուշարձանից Դոդօխեանի անունը յաւերժացնելու համար Սիմֆերոպոլի հայ հասարակութիւնը պարտաւոր է բանաստեղծի անուան մի թոշակաւոր աշակերտ պահել հայոց դպրոցում, ուր նա երկար տարիներ հոգաբարձու է եղել, և այդ ծառայութեան մէջ, ինչպէս յիշում են սիմֆերոպոլցիները, եղել է օրինակելի հասարակական պաշտօնեայ։

Ողորմելի է այն ժողովուրդը, որը չը գիտէ գնահատել և յարգել իր գործիչների յիշատակը։ Ղրիմի հայերի ազգային արժանապատւութեան դէմ մի կսկծալի փաստ կը լինէր, եթէ Դոդօխեանի անունը նրանց մէջ այդպէս շուտով մոռացվէր....

Բայց մեզ սիրելի է յուսալ, որ «Ծիծեռնակի» երգիչը չի մոռացվի իր հայրենակիցների սրտերում, և Դոդօխեանի հետևեալ դիմումը իր աննման «Ծիծեռնակին»՝ կը մնայ յաւէտ բանաստեղծի ազգային քնարի անմոռաց հնչիւնը.

Իմ քաղցրիկ ծիծեռնակ,
Երբ ննջեմ սառ հողի տակ,
Դու պիտի պահպանես
Ազգիս մէջ իմ յիշատակ։

Ց. Սպէնդիար

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՂՃԻ ԽԱՅԹԸ

Ոչ թէ ամեն օր, այլ ամեն ժամ, ամեն րոպէ զանազան դասակարգերի մէջ և զանազան պատճառներով տեղի ունեցող ինքնասպանութիւնների անվերջ շարաններից կազմված դէպքերը այնքան սովորական են դարձել մեզ համար, որ նրանք այլ ևս դադարել են մեր ջղերի վրա որևէ ազդեցութիւն գործելուց։ Իսկ եթէ նրանց մէջ լինում են այնպիսի դէպքեր, որոնք արժանանում են առանձին ուշադրութեան, այդ արդէն պէտք է համարել ապացոյց այն բանի, որ այդ դէպքերը կատարվել են այնպէս ասած «արտակարգ» պայմանների մէջ և նման չեն օրվայ սովորական երևոյթների շարքն անցած ինքնասպանութիւններին...

Այդ «արտակարգ» պայմանների մէջ կատարված ինքնասպանութեան մի դէպքի մասին մայրաքաղաքի ռուս «Совр. Сл.» լրագրում տպված էր մի շատ համառօտ տեղեկութիւն՝ լուսաբանված ընդարձակ յօդուածով։

«Մի բանւոր ածելիով կտրել է իր վիզը և վերջ տուել կեանքին»։

Ըստ երևոյթին կատարվել է սովորական հազարաւոր ինքնասպանութիւնների նման մի դէպք, և ուրիշ ոչինչ։ Տեսնենք։

40 տարեկան բանւոր Վաս. Սաւելիևը իր ընկերներից մէկից մի տարի առաջ պարտք է վերցնում 10 րուբլի և ժամանակին չէ վճարում։ Իր պարտքի մասին Սաւելիև բանւորը յիշում է այն ժամանակ միայն, երբ տեղեկանում է, որ ընկերը անգործ թափառելով՝ բարեկենդաններին մեռել է վերջին ծայր չքաւորութեան մէջ...

Այդ րոպէից սկսած Սաւելիևի հոգու տանջանքները հանգիստ չեն տալիս նրան, խղճի խայթը ներսից ծակել է սկսում և շարունակ տանջում...

«Եթէ ես ժամանակին վճարած լինէի պարտքս, գուցէ ընկերս չը մեռնէր»—մտածում է թշուառ Սաւելիևը և այդ անվերջ տանջանքների ծայր ազդեցութեան տակ վեր է առնում ածելին, դուրս կտրում կոկորդը և վերջ տալիս իր տանջալից կեանքին...

«Խնդրում եմ ոչ ոքի չը մեղադրել. ինձ սպանեց իմ խիղճը»,—ասում է նրա թողած մի տող գրութիւնը...

Այս դէպքը կատարվել է հեռաւոր Ռուսաստանում և ըստ երևոյթին ոչինչ չունի մեր իրականութեան հետ։

Բայց եթէ մի քիչ խոր մտածելու լինենք, կը տեսնենք, որ մեր մէջ ևս կան անթիւ, անհամար Սաւելիևներ իրանց բոլոր հետևանքներով։ Եւ կան ոչ միայն կեանքի կատաղի ալիքներից այս ու այն կողմ շպրտվող ընչազուրկ բանւորների շրջանում, ոչ միայն այդ նոյն կեանքի քաղցրութիւնը վայելող և նրա փարթամութեան մէջ մշտապէս լողացող, քաղցածին մանր բրթող կուշտ դասակարգի մէջ, այլ և, որ աւելի ողբերգական է, կան բարձրագոյն կրթութիւն ստացած դասակարգի մէջ ևս. մի դասակարգ, որ կոչված պէտք է լինի առաջինների բարոյական աւան-գարդը լինելու, որի մէջ խղճի, մարդասիրութեան և, որ գլխաւորն է, պարտաճանաչութեան ազատ ձայնը, որպէս իր շրջապատի համար օրինակելիութեան քարոզի ազդանշան, ամենից առաջ և ամենից զօրեղ պէտք է հնչելիս լինի։ Տարաբաղդաբար այդ այդպէս չէ։ Եւ «այդպէս չէ» ասելու իրաւունք ինձ և շատերին տալիս են, եթէ հեռու չը գնանք, հէնց, օրինակ, այն ուղղակի պարտքերը, որոնք վերցված են դեռ ուսանողական նստարանների արանքում եղած ժամանակից ուսանողական համեստ դրամարկղից և «մոռացված»...

Կրկնակի տարաբաղդութիւնն այն է, որ այդ «մոռացված» պարտքերի մասին յիշեցնելն անգամ համարվում է վիրաւորանք, եթէ ոչ յանցանք։ Կեղծ քաղաքավարութեան և նախապաշարմունքային սովորութիւնների ցեխով շաղախված պատնէշը, որի ներսում թառ են նստում այդ «մոռացումները», թոյլ չէ տալիս «ինչ-որ դրամական հաշիւների համար» պատիւ շօշափելու...

Եւ այն ժամանակ, երբ այդ «մոռացված» պարտքերի բացերը ով գիտէ քանի տեղ կատարելիս լինեն Սաւելիևի 10 րուբլու «բարեկենդանի» դերը, այստեղ այդ պարտատէրերին դրանց մասին յիշեցնելն անգամ համարվում է ոչ միայն կոպիտ անքաղաքավարութիւն, այլ և քրէական յանցանք։

Մօտեցիր, յիշեցրու մէկին նրա նիւթական կամ բարոյական պարտքի մասին և դու կը դառնաս не культурный мужичекъ, կամբաստանվես հասցրած վիրաւորանքի համար։

Նա փորձում է, երբեմն բարձրացնում է վարագոյրի ծայրը, բայց նկատելով, ծանօթանալով նրա տակից երևացող պատկերների քանակի և որակի հետ՝ դարձեալ զգուշութեամբ ցած է թողնում այդ ծայրը։

Եւ եթէ, այս բոլորը այսպէս լինելուց յետոյ, մի հրաշքով՝ մեր բոլոր դասակարգերի մէջ գոյութիւն ունեցող բոլոր Սաւելիևների մէջ յարութիւն առնէր խղճի խայթը գուցէ փոխանակ ինքնասպանութեան դուռը հասնելու աշխատէին օր առաջ իրանց բարոյական պարտքը կատարելու։

Որքան էլ ծանր և անախորժ է այս բոլորը, բայց այս է մեր իրականութեան արտայայտիչ կօնտրաստ նեգատիվը...

Սաւելիևները իրանք պէտք է լինեն ածելիներից իրանց փրկողը. և որքան շուտ, այնքան լաւ։

Բ. Մ.

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈ՞Վ ԹԷ՞ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Մարտի 20-ին Նորաշէնի ս. Աստուածածնի եկ.-ծխական օրիորդաց դպրոցում տեղի ունեցաւ ծնողական ժողով։

Եկել էին գրեթէ բոլոր մայրերը և, ականջները լարած, անհամբեր սպասում էին, թէ ի՛նչ պէտք է ասեն իրանց մատաղ զաւակներին սովորեցնող ու դաստիարակող վարժուհիները։

Ժողովը բացվեց։ Աւագ վարժուհին ամենից առաջ գովաբանեց և մինչև երկինք բարձրացրեց իր հովանաւորութեան տակ գտնվող դպրոցը և նսեմացրեց մինչև անգամ Յովնանեան ու Գայիանեան դպրոցները՝ ասելով. «Գիտէք, մեր ուսումնարանը անհամեմատ աւելի բարձր է կանգնած կարգ ու կանոնի տեսակէտից մինչև անգամ Յովնանեան ու Գայիանեան դպրոցներից»։

Ապա սկսեց խօսել այն աշակերտուհիների մասին, որոնք թոյլ են ուսման մէջ և իրանց անկարգ են պահում։

— Կամենում էք կասեմ, թէ որո՛նք են վատ սովորում ու իրանց անկարգ պահում։

Ժողովականներից 2—3 հոգի համաձայնութիւն յայտնեցին։

Վարժուհին վերցրեց ցուցակը և բացագանչեց.

— Կիրակոսեան։

Ծնողները չէին եկել. վեր կացաւ աշակերտուհին։

— Ծնողներդ ինչի՞ չեկան. ես քեզ ինչ պէտք է ասեմ. ինձ մայրդ էր հարկաւոր. ես նրան շատ բան ունէի ասելու...

Տալիս է երկրորդի անունը։

— Մարկոսեան։

Վեր է կենում տիկ. Մարկոսեանը։

— Օ՛հ, Մարկոսեանը դուք էք, այս-ինչի մայրը. բարով, հազար բարով էք եկել... Անչափ ուրախ ենք, որ այս 6 ամսվայ ընթացքում բաղդ ունեցանք գոնէ այսօր ձեր երեսը տեսնելու։

Պարզ բան է, որ տ. Մարկոսեանը կարմրում է վարժուհու հեգնական ու ծաղրալի խօսքերից։

— Մէկէլ ձեր աղջիկը, — շարունակեց վարժուհին,—լաւ չէ սովորում ու իրան անկարգ է պահում, այսինքն լաւ չէ հագնված, ոտնամանները պատառոտած, շորերը չը կոճկած, առաւօտները ուշ է ուսումնարան գալիս և այլն։ Հարցնում եմ՝ «ինչի՞ ուշացար». պատասխանում է, թէ «մայրս հացի ուղարկեց, ջրի ուղարկեց, և դրա համար ուշացայ»։ Այսպէս թէ այնպէս, լաւ չէք դաստիարակում ձեր երեխին։ Շատ անգամ բարկանում եմ, պատժում եմ նրան, բայց փոխանակ ամաչելու կամ փղձկալու՝ ծիծաղում է։ Դրանից երևում է, որ ծեծի և նախատինքի այնքան էք վարժեցրել, որ նրան այլ ևս ոչ մի բան չէ ազդում։

— Ամենից առաջ՝ աղջիկս սուտ է ասել, թէ ես նրան ջրի կամ հացի եմ ուղարկում առաւօտները. ընդհակառակը, երբ որ տեսնում եմ, որ նա դասին ուշանում է, ես միշտ շտապեցնում եմ, որ շուտով հագնվի ու գայ ուսումնարան։ Հաց կամ մի այլ բան գնելու համար ես ունեմ և ուրիշները։ Բացի դրանից, աղջիկս որպէս դեռ շատ փոքր, ճիշդն ասած, շատ չար է և անվախ։

— Ո՛չ, աղջիկդ շատ լաւ երեխայ է, դուք ծնողներդ էք անկարգ։

Վարժուհիներից մէկը բաւական խուլ ձայնով ասում է իր ընկերուհուն. «Ինչպէս աղջիկն է ստախօս, նոյնպէս և մայրը»։

Տիկին Մարկոսեանը այդ խօսքի համար սաստիկ վիրաւորվելով՝ պատասխանում է.

— Դուք ինչո՞վ էք հաստատում իմ ստախօս լինելը։

— Նրանով, որ ձեր աղջկան դուք միշտ գործ էք շինել տալիս, այնպէս որ, երբ որ ես ինքս մի անգամ եկայ ձեր տունը, ձեր աղջիկը երեխին էր փաթաթում, գրկում...

---

*) Այդ գրական ժառանգութիւնը այժմ ինձ մօտ է գտնվում, կայ նրա մէջ և «Ծիծեռնակի» անդրանիկ բնագիրը՝ Դոդօխեանի ձեռքով գրված Դորպատում՝ նրա ուսանողութեան ժամանակ, որով վերջնականապէս հերքվում է այն՝ մի ժամանակ տարածված անհեթեթ կարծիքը, իբրև թէ „Ծիծեռնակի“ հեղինակը Ներսէս Աշտարակեցին կամ ոմանց ասելով՝ Դոդօխեանի ընկեր Վահան Ռուկարեանն է եղել։ „Ծիծեռնակը“ գրված է թուխ՝ ժամանակից խունացած թղթի վրա. կան տողամէջ ջնջված և ուղղագրած տեղեր։

Դոդօխեանի թողած ոտանաւորների թիւը մեծ չէ. նրանց մէջ մենք գտանք նաև Ղրիմի հայերի կեանքին վերաբերեալ երգիծական կտորներ։ Ոտանաւորները լոյս կը տեսնեն «Արօր» ամսագրում, ուր մաս առ մաս կը հրատարակվեն մայիս կամ յունիս ամսից սկսած, որից յետոյ մենք մտադիր ենք բանաստեղծի յիշատակը յաւերժացնելու համար Դոդօխեանի երկերի ժողովածուն լոյս ընծայել առանձին գրքոյկով՝ բանաստեղծի պատկերով, կենսագրութիւնով և ոտանաւորներին կցած ծանօթութիւններով։ Ց. Ս.

— Ինչ անենք որ երեխին էր գրկում, քանի որ դուք եկել էիք և զբաղված էինք ձեզ հետ խօսելով, դրա համար էլ երեխին նա էր ուշադրութիւն դարձնում, որպէս զի նրա լացը չը խանգարէր մեր խօսակցութիւնը...

— Լաւ, բայց ձեր տունը ինչ էր. կեղտոտ, թափթփած, ոչ մի բան իր տեղը չէր...

— Ուրեմն, դուք րէվիզիայի էք եկել իմ տան մէջ, որ անտեղի կերպով խայտառակէք ինձ այս ժողովրդի ներկայութեամբ. լաւ, շատ շնորհակալ եմ. դուք ինձ այստեղ էք խայտառակում, ես էլ ուրիշ տեղ կը յայտնեմ աշխարհին ձեր այդ վարմունքի մասին...

Կատարելապէս գունաթափ ու անպատուած տիկինը շուռ եկաւ ու արագ քայլերով դուրս գնաց, սակայն աւագ-վարժուհին այդ ամենը վիճաբանութիւն հասկանալով՝ բացագանչեց.

— Համեցէք, տիկին, համեցէք, էլի վիճենք, ուր էք գնում...

Ծնող

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Անդրկովկասեան երկաթուղու Կերար կայարանի գլխաւոր՝ Վարդէն Ղիփիանին, որ մօտ ծանօթ և յարգող անձնաւորութիւններից մէկն է հանգուցեալ Գ. Սունդուկեանի, մեզ ուղարկել է մի բանաստեղծութիւն վրացերէն լեզուով գրված և Գ. Սունդուկեանի յիշատակին նուիրված՝ «Մշակում» տպագրելու խնդրանօք: Սակայն, որովհետև մենք հնարաւորութիւն չունենք վրացերէն լեզուով ոտանաւոր տպելու մեր թերթում, ուստի տալիս ենք նրա բառացի թարգմանութիւնը և տպագրում ենք բանաստեղծութեան հեղինակի մեզ ուղղած նամակը, իսկ բանաստեղծութիւնը մեր կողմից յանձնում ենք վրաց ամենօրեայ «Սախալխօ Գազէթի» խմբագրութեանը տպագրելու խնդրանօք:

Կերար, 1 ապրիլի

Մեծարգոյ պ. խմբագիր «Մշակ» լրագրի!

Խոնարհաբար խնդրում եմ, եթէ հնարաւոր կը գտնէք, զետեղել այս բանաստեղծութիւնը ձեր «Մշակ» լրագրում ի յիշատակ տաղանդաւոր դրամատուրգ Գ. Սունդուկեանի:

Յարգանօք՝
Կերար կայարանի գլխաւոր
Վ. Ղիփիանի

P. S.—Թաղմանը ես ներկայ էի: Մօտիկից ճանաչում էի հանգուցեալին և յարգում:

Նոյնը

Բազմավաստակ դրամատուրգ երջանկայիշատակ Գ. Ն. Սունդուկեանի յիշատակին

Վրացի և հայ ազգերը
Իրար կապող հայր,
Արժանի ես դառն լացի
Երկու ազգերի կողմից:
Ինչ որ գործեցիր և գրեցիր
Պիէսներ և դրամաներ,
Ուրախացիր նրանով, որ նրանք
Մեր մէջ ի զուր տեղը չեն անցել:
Այժ. Պէպօն գլխիդ լալիս է
Օձիքը պատառոտած տեղովը.
Լալիս են նաև միւս հերոսները,
Որոնց ես այստեղ չեմ յիշում:
Շնորհակալութիւն են յայտնում բոլորը
Թանգագին քաղցրախօսիդ,
Մեր ժողովրդի համար հոգատար
Բարեգութ մարդուդ:
Այժմ, մնաս բարով—
Թէև այս արտասանելը ծանր է,—
Եւ Աստուծուց հայցում եմ, որ ունենաս
Հանգիստ ու քաղցր օթևան:

Վարդէն Ղիփիանի
(Ղվանկիթէլի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նոր տանուտէրի ընտրութիւնը

Դաշբուլաղ (Նուխու գ.), 25 մարտի

Մեր մի քանի գիւղերի ընդհանուր տանուտէր Մէլիք-Տօնեանը հրաժարական տըւեց իր պաշտօնից, որն և ընդունվել է իշխանութեան կողմից: Պարոնի հրաժարականը տեղին է և իրան պատւաբեր: Յունվարի 23-ին հաշտարար միջնորդ իշխան Միքելաձէի նախագահութեամբ միաձայն ընտրում են Դանիէլ Աւագեանին տանուտէր, իսկ օգնական՝ Ց. Մէլիքսարգսեանին: Ընտրութիւնը շատ աջող է. Աւագեանը առաջին անգամը չէ, որ կոչվում է հասարակութեան ծառայելու. մենք սրանից շատ բան ենք սպասում յօգուտ հասարակութեան. Նա երիտասարդ է և գործունեայ, բացի այդ՝ նա տիրում է պետական լեզուին:

Անցեալ տարվայ դաժան ձմեռվայ ցըրտերից անասունների կերից տանջվող հասարակութիւնը այս տարի ազատ է շնորհիւ բարեխառն եղանակների:

Ց. Բ.

Անմեղ զոհը

Զորագիւղ (Լօռու շրջ.), 26 մարտի

Մենք «Մշակի» անցեալ թիւ № 275-ի մէջ համառօտ կերպով նկարագրել էինք մեր գիւղացու քաշած նեղութիւնների մասին ջրի պակասութեան պատճառով. ի միջի այլոց շեշտել էինք, որ ջրի հերթի սպասելուց և մրսելուց շատերին է պատահում երեխաների վիժումն, թոքերի բորբոքումն և այլն: Եւ մեր գիւղացին սրանք համարում է չարիքների փոքրագոյնը: Ինչպէս՝ ինքս քիչ է մնում համոզվեմ գիւղացու ասածին և յիշեալ երևոյթներին տամ երկրորդական տեղ, քանի որ այսօր ականատես ենք աւելի խիստ ճակատագրական դէպքի:

Ամսիս 24-ին (աւ.-շաբաթ օրը) այրի Ս. Ոսկանեանը, որ ունէր երկու երեխայ, կրակարանը գնելով կրակին և երեխաներին տանը թողնելով (5 և 3 տարեկան) գնում է աղբիւր: Ամբողջ չորս ժամ սպասելուց յետոյ՝ վերջապէս հերթ է ստանում կուժը լցնելու և վերադառնում է տուն, որտեղ իր մեծ աղջին տեսնում է կրակի մէջ բոցավառված. մօր ճիչ ու աղաղակին թափվում են հարևանները և հանգցնում, կարելի է ասել, արդէն խորոված երեխին, որից յետոյ երեխան սարսափելի տանջանքների մէջ փչում է հոգին: 1911 թ. յունվարից մինչև օրս այս երկրորդ դէպքն է կրկնվում մեր գիւղում նոյն պատճառով:

Կարծում ենք, որ գոնէ անմեղ երեխաների կեանքը վտանգից զերծ պահելու համար՝ կարևոր է, որ մեր գիւղացին լուրջ մտածի և միջոցներ որոնի աղբիւր բերելու համար:

Արտուր

Հիւանդութիւններ Շուշու գաւառում

Դահրազ գիւղ (Շուշու գաւ.), 17 մարտի

Անցած տարվայ սեպտեմբեր ամսից մինչև այժմ իրար հետից այցելեցին Դահրազ, Միրիշանլու, Վարազաղոյն և Հարաւ գիւղերը բգային, ծաղիկ և հաղ հիւանդութիւնները և տարան բաւական զոհեր այդ գիւղացիների մատաղ մանուկներից և սուգ տարածեցին խեղճ գիւղացիների խրճիթներում: Այդ հիւանդութիւնները չքացան հէնց այն օրը, երբ գարունը ոտք դրեց մեր կողմերում: Այժմ էլ գիւղացիները կը հանգըստանան հոգեպէս: Բայց չէ՞ որ նրանց տառապող հիւանդներին հարկաւոր էր ձրի բժշկական օգնութիւն... Իսկ ո՞վ է մտածել դրա մասին:

Կ. Յովհաննիսեան

Ո՞ւմ յօբելեանը հարկ է տօնել

Ղզլար, 27 մարտի

Ամսիս 20-ին տեղիս արական ծխական դպրոցում եղել է ծխական ժողով, որտեղ վճռվել է տօնել տեղիս ս. Լուսաւորիչ եկեղեցու 100-ամեայ գոյութեան յօբելեանը, որ լրանում է այս տարվայ յունիսի 2-ին: Այդ առիթով ընտրվել է մասնաժողով, որ պէտք է մշակի ծրագիր, թէ ինչ կերպ պէտք է տօնել յիշեալ յօբելեանը:

Մեր կարծիքով աւելորդ է տօնել եկեղեցու յօբելեանը: Կարելի է միայն կազմել եկեղեցու համառօտ պատմութիւնը, տպագրել և տարածել ժողովրդի մէջ, ուրիշ ոչինչ:

Կան աւելի կարևոր յօբելեաններ, որոնց ուշադրութիւն չենք դարձնում:

Հէնց մեզանում պէտք է տօնել մի շատ յարգելի անձնաւորութեան յօբելեանը:

Ղզլարում ապրում է և գործում է 40 տարիներից աւելի բժշկապետ Ռոմանոս Միքվէլեանը: Նա գործել է ոչ միայն բժշկական ասպարէզում, այլ և հասարակական: Եղել է հոգաբարձու տեղիս ծխական դըպրոցներում: Երկար տարիներ վարել է տեղիս Բարեգործական Ընկերութեան հիւանդանոցի բժշկի պաշտօնը առանց որևէ վարձատրութեան: Տարիներ շարունակ նախագահել է նոյն Ընկերութեան: Մի խօսքով՝ քիչ երախտիք չունի յարգելի բժշկապետ Ռոմանոս Միքվէլեանը Ղզլարի վրայ:

Եթէ չեմ սխալվում, կարծեմ երկու տարի առաջ էր, «Терекъ» թերթում կար մի առաջարկութիւն՝ տօնել Ռ. Միքվէլեանի 40-ամեայ գործունէութեան յօբելեանը: Բայց այդ առաջարկութիւնը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»:

Արդ՝ այժմ լաւ չէր լինի, որ ղզլարցիները մտածէին այդ մասին և տօնէին յարգելի բժշկապետի 40-ամեայ գործունէութեան յօբելեանը: Այդ բանը պէտք է գլուխ բերի Ղզլարի Բարեգործական Ընկերութիւնը: Վստահ ենք, որ ղզլարցիները ուրախութեամբ կը մասնակցեն արժանաւոր մարդու յօբելեանին: Հարկաւոր է միայն, որ Բարեգ. Ընկ. գործի գլուխ կանգնի:

Յուսով ենք, որ Բարեգ. Ընկ. կը կազմակերպի Ռ. Միքվէլեանի յօբելեանը, որով հոգեկան բաւարարութիւն պատճառած կը լինի յարգելի բժշկապետին իր ծերութեան օրերում:

Ս. Կար.

Գիւղական տգեղ բարքեր

Աշտարակ, 24 մարտի

Այս օրերս անյայտ չարագործներ կոտորեցին Ոսկան Շահազիզեանի և տանուտէր Բաղդասարի այգիները:

Աշտարակից վեց վերստ հեռաւորութիւն ունեցող Թուրքաբնակ Ուշի գիւղում այս ամսի 20-ի գիշերը՝ հարևան տնից իր տուն վերադառնալով՝ մի թուրք գտնում է իր կնոջ հետ միասին հարևան Եթիմ Մամէդին և սկսում է դաշոյնի ծանր հարուածներ հասցնել և սպանում է տեղն ու տեղը: Այդ միջոցին կինը, միջոց չը կորցնելով, դուրս է քաշում բնից Մամէդի դաշոյնը և մէջքից երեք հարուած է տալիս մարդուն. զգալով հարուածների կսկիծը՝ յետ է դառնում դէպի կինը և դաշոյնի հարուածներով սպանում է, իսկ ինքն էլ ծանր վէրքերից վայր է գլորվում. թէև մեռած չէ, բայց վէրքերը վտանգաւոր են:

Աւագ հինգշաբթի գիշերը Երևանի սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցում մի երիտասարդ՝ օրիորդի հագուստով գնում է եկեղեցի և խառնվում օրիորդների մէջ. վերջապէս օրիորդները զանազանելով գայլին ճանաչում են և յայտնում պահապան գօրօդօվօյներին, որոնք մի լաւ ծեծելուց յետոյ ոստիկանատուն են տանում հանաքչի երիտասարդին:

Կ. Յակոբեան

Դրութիւնը Ջէբրայիլի գաւառում

Ջէբրայիլ (Կարեագ. գաւ.), 24 մարտի

Մեր գաւառի ցանքսերը ժամանակից շուտ են զարգացել և խոստանում են առատ հունձ: Ուր նայում ես՝ կանաչ ցանքսեր են երևում շատ առողջ տեսքով, բայց արդիօք ազատ կը մնան մորեխից ու կարկուտից՝ անյայտ է... Առաջին գաւառամասում այս տարի կան բաւական մորեխի կուբիշկաներ, որոնք եղանակի տաքութեան պատճառով սկսել են զարգանալ: Արդէն ձեռք են առնված հարկաւոր միջոցներ՝ մորեխի դէմ կռուելու համար:

Մեր գաւառի բանիմաց մարդկանց բարոյական պարտականութիւնն է ժողովրդին յորդորել, որպէս զի մորեխի դէմ կռուելու գործում աշխատեն ամեն եռանդով և չասեն շատերը, թէ մեզանից մորեխը հեռու է, և չաշխատեն խոյս տալ զանազան միջոցներով այդ մեծ պարտականութիւնից:

Շերամի սերմի բաժանելը սկսված է մի շաբաթ սրանից առաջ, որովհետև տաք եղանակների պատճառով թթենիները սկսել են զարգանալ ժամանակից շուտ:

Ղարադաղի հայերի դրութիւնը այժմս լաւ է. նրանց վնասները յետ են տրվում կողոպտիչ խաներից. դեռ նրանք, բացի այդ, պատժվում էլ են:

Աս. Տէր-Յարութիւնեան

Նորութիւններ Նուխիից

Նուխի, 28 մարտի

Նուխին ունի երկու եկեղեցի և մի քառաձայն խումբ, որը կառավարում է Փարըդանեանը, և որովհետև Զատկի տօներին հաւաքվում է մեծ բազմութիւն եկեղեցիներում, այդ պատճառով տեղիս սիրողները և սիրողուհիները կազմակերպեցին քառաձայն խումբ, որը շաբաթ օրը երգեց ս. Մինաս եկեղեցում, իսկ կիրակի օրը ս. Աստուածածնայ եկեղեցում ղեկավարութեամբ Ա. Գրիգորեանի: Խումբը շատ աջող երգեց. գովելի են օր. Մ. Գրիգորեանի մի քանի սօլօները: Հասարակութիւնը խորին շնորհակալութիւն յայտնեց խմբին: Ցանկալի կը լինէր, որ Նուխին ունենար մշտական այդպիսի սիրողների խումբ:

Ամսիս 26-ին այրվեց Միշադի Խալիլ Դադաշովի երեք-յարկանի նոր կառուցված տունը ամբողջովին: Վնասը հասնում է մօտ 10,000-ի:

Նորերս 4 հովիւների ձեռքով փայտերով սպանվեց յայտնի աւազակապետ Զաւադօղլին և իր ընկեր Դարչինը:

Եչէ

ԻՍՐԱՅԷԼ ՕՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ ՅԱՒԵՐԺԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Ինչպէս արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին, անցեալ տարվայ վերջին Աստրախանի ծխական ժողովներից մէկում հարց բարձրացաւ ազգային յայտնի գործիչ՝ Իսրայէլ Օրու յիշատակը յաւերժացնելու մասին նրա մահվան 200-ամեակի առիթով, որը լրացաւ անցեալ 1911 թ.:

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ Իսրայէլ Օրին Մօսկվա գնալիս անցել է Աստրախանի վրայով և հէնց այստեղ 1711 թ. ամառը, օգոստոս ամսին, մեռել է և թաղվել է Աստրախանի հայոց եկեղեցու մօտ: Բայց մինչև այսօր Աստրախանում կատարված որոնումները չեն կարողացել մի որևէ կերպ լոյս սփռել նրա գերեզմանի տեղը գտնելու վերաբերմամբ: Այս հարցով իր ժամանակին հետաքրքրվել են նաև Աստրախանի նախկին առաջնորդ՝ Սրբազան Եպ.-ը և տեղիս „Астрах. Вѣстникъ"-ի խմբագիր Շպիկօն և ոչ մի հետևանքի չեն կարողացել հասնել, որովհետև եկեղեցիների ներսը և դուրսը գտնված հին և նոր գերեզմանաքարերից ոչ մի յիշատակութիւն չէ երևացել նրա մասին:

Բայց հաւանական է, որ Իսրայէլ Օրին թաղված լինի տեղիս կամ Աստուածածնայ աւագ-եկեղեցու և կամ թէ ս. Կատարինէի բակում, որովհետև այն ժամանակ Աստրախանում եղել են հէնց միայն այս երկու եկեղեցիները, որոնցից վերջինը եղել է գերեզմանատան եկեղեցի, իսկ միւսը՝ աւագ: Եթէ մի ենթադրութիւնը խօսում է յօգուտ ս. Կատարինէ եկեղեցու՝ իբրև գերեզմանատան, միւսն էլ պակաս հաւանական չէ, որ Օրին իբրև զինւորական նշանաւոր անձնաւորութիւն՝ թաղվէր աւագ-եկեղեցու բակում:

Այսպէս թէ այնպէս, մինչև այսօր չէ աջողվում գտնել նրա գերեզմանատեղին:

Աստրախանի հայ հասարակութիւնը, չը նայելով որ իր գրկումն է թաղել այդ նշանաւոր հայ մարդուն, համարեա բոլորովին անծանօթ է թէ նրա գործունէութեանը և թէ մինչև անգամ նրա անունը:

Սակայն ծխական ժողովը իր ժամանակին սկզբունքով ընդունելով Օրիի յիշատակը յաւերժացնելու առաջարկը՝ ընտրեց նախապատրաստական ծրագիրը կազմելու համար մի մասնաժողով՝ բաղկացած 7 անձնաւորութիւններից, որոնք և պէտք է իրանց զեկուցումը՝ յիշատակը յաւերժացնելու ձևի մասին՝ ներկայացնեն ծխական ժողովի վերջնական որոշմանը:

Մասնաժողովը ունենալով մի քանի խորհրդակցական նիստեր՝ եկաւ հետևեալ եզրակացութեան.

1) Գրել տալ Իսրայէլ Օրիի ընդարձակ պատմութիւնը որքան կարելի է մատչելի թէ նիւթի և թէ գնի կողմից:

2) Եթէ նիւթական միջոցները թոյլ տան, մի գեղեցիկ կոթող կանգնեցնել աւագ-եկեղեցու բակում:

3) Կատարել աշխարհիկ հանդէս (երեկոյթ կամ ցերեկոյթ) և ծանօթացնել ժողովրդին Օրիի կենսագրութեան հետ:

և 4) Կատարել եկեղեցում հոգեհանգիստ նրա մահվան 200-ամեակի առիթով:

Ահա մասնաժողովի այս վճիռներն են, որ այս օրերս բերվում են ծխ. ժողովի վերջնական որոշմանը:

Անշուշտ Իսրայէլ Օրիի յիշատակը յաւերժացնելու հարցը ունի համազգային նշանակութիւն և այդ պատճառով էլ շատ հաւանական է, որ Կովկասի և մեր միւս հայաշատ քաղաքների ազգայինները նոյնպէս մասնակցեն թէ այդ առիթով անվիլիք հանգանակութեանը և թէ նրա հանդիսաւոր տօնախմբութեանը:

Ս. Գ. Ասլանեան

Աստրախան

ԿՈՒԶԷՆ ԳԻՒՂԻ ՄԱՍԻՆ

Կարդացինք «Հօրիզօնի» № 49-ում (մարտի 7-ի համարում) մի սուտ լուր, որպէս թէ Կոզէն գիւղումն երկու մարդ սովից մեռել են: Այդպիսի դէպք չէ պատահել. հիմնովին սուտ է:

Լրատուն մի այնպիսի խոշոր սուտ էր ստեղծել, որ կարծես թէ լրագրի կարդացողները այդ բանը չեն հասկանում:

Կոզէն գիւղից 20 վերստ հեռու՝ Թօվուզի կայարանում նստում են ոստիկանապետ, հաշտարար-դատաւոր և հաշտարար միջնորդ: Կարծեմ այդ բանը նրանց ևս յայտնի կը լինէր, բայց չեն լսել և իմացել:

Կոզէնը նրանց քթի տակն է: Այսօր Կոզէն գիւղացիք Ղազախի գաւառում գտնվող մի քանի գիւղերի շատ բնակիչներից լաւ են ապրում, այն է՝ Թաթլու, Հախում, Ջինարլի, Սեւ գիւղ, Լալի գիւղ, Ներքին-Կարմիր-աղբիւր, որոնց մէջ սով է տիրում: Կոզէնցիներից շատերի հագուստները արշինը 3 ռուբլանոց դիագանալից են կարված: Հարց ենք տալիս, թէ երբ է պատահել սովամահ մարդկերանց մահը: Ո՞ւմ ձեռքով են թաղված կամ հողարկված սովից մեռածները: Ե՞րբ է պատահել, ո՞ր ամսին, ո՞ր թւին: Կայ մի այնպիսի զեկուցում տանուտէրի կողմից տրված մերձաւոր իշխանութիւնը: Խնդրեմ պատասխանել, պ. սրտացաւ-կարծեմ սուտ խօսքերը ոտներ չեն ունենայ:

Ամբողջ Եւրոպային էք հասցրել այդ սուտ լուրը: Զգոյշ վարվեցէք: Ամեն հոգու հաւատացէք. կոզէնցոց մէջ կան մի քանի տղըուկներ, աղքատ, որբեր՝ արդէն ծնողներ, նրանց մի հաւատաք:

Եթէ կոզէնցիներին հարիւր հազարներ տաք, էլի այն ջուրը այն ջրաղացը պէտք է լինեն և պէտք է թուրքերին իրանց ծնօցումը պահեն: Այս քանի օրերս թուրքերի հետ շաղկապված, սուտ գրութիւններ գրած, ուզում են հայոց կոպէկ-կոպէկ նուէրներ տուած փողերը ուտել: Որովհետև աշխարհումս լինում են խաբդախողներ, լաւ կը լինէր, որ լրատուն կասմակի մարդկանցից ստուգէր, յետոյ լրագրի նիւթ դարձնէր:

Սուտ չէ, որ ունենք հացի պակասութիւններ, ոչ՝ սուտ չէ. բայց չափազանցված է. նրանց մէջ կան միջոց ունեցողներ, դարձեալ նրանք են օգտվում մէջտեղից: Դրանք խաբել են Շահրեկեանին, յետոյ Ա. Թումանեանին. վերջը Տէր-Պօղոսեանին տեսնենք ինչ կանեն:

Կոզէնցի կուլակները չափազանցրել են կարիքը, ճշմարիտ չեն խօսել. միշտ ուզել են և այժմ էլ ուզում են նպաստներ ձեռք բերել:

Լաւ կը լինէր ճշմարտութեան վրայ հիմք դնէիք, յետոյ այդ մեծ գումարը բաժանէիք: Ժամանակի ընթացքում կը խղճահարվէք մեր հայոց ազգի տուած նուէր կոպէկների մասին:

Ազգի փողերը խնամքական դեր է խաղացվել: Մինչև անգամ կաթողիկոսի տեղակալին են ուզում սխալեցնել. ահա թէ գործը ի՛նչ տեղ է հասել:

Մեր հայոց ազգը շատ մեծ կարիքներ ունի փողի կողմից. ամբողջ ազգին յայտնի է, թէ ուսումնարանների և թէ զանազան հիմնարկութիւնների մասին:

Ազգի փողը միայն կոզէնցիների համար չէ ժողովված, որ նրանք կշտանան: Նրանք նպաստներին սովորել են, և դրանց մէջ գտնուող-եկողների ծախսերի հաշիւները կոզէնցիները իրանց վրայ հաշւում, թէ վերջը ինչ կը լինի Աստուած գիտի:

Յովհ. Օհանէսեան

Թօվուզ կայարան, 10 մարտի

Ծանօթ. խմբագր.—Մենք տպագրում ենք ներկայ նամակը վերապահութեամբ, անելով սղումներ և կրճատումներ: Նամակի հեղինակը հաւատացնում է, որ կոզէնցիների յուզումները չափազանցված են իրանց կարիքների մասին: Ցանկալի է, որ ճշմարտութիւնը պարզվէր արժանաւոր հաւաստութեամբ: Մենք ամենքս համակրութեամբ վերաբերվելով օգնութեան գործին, անշուշտ, չէինք ցանկանայ, որ գտնվէին հասարակութեան բարեգործութիւնը ի չար գործ դնողներ: Կոզէնցիները հացի կարիք ունեն. դա անկասկած է: Եւ նրանք ստացել են օգնութիւն: Իսկ նրանց չափազանցված պահանջները, անկասկած, կը պարզվին առաջիկայում: Մենք դժուարութեամբ վստահացանք տպագրութեան տալ ներկայ նամակը, բայց մտածեցինք, որ ճշմարտութեան պարզելը վերջ կը դնի թիւրիմացութիւններին:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ղզըլ-Արվատ, 28 մարտի

Երէկ, ամսիս 27-ին, ցերեկով յայտնվեց քաղաքիս ազգաբնակութեան, որ երեկոյեան՝ յատուկ արտակարգ գնացքով՝ Ղզըլ-Արվատ կայարան կը ժամանէ զինուորական մինիստր գեներալ Սուխօմլինովը:

Ինչպէս յայտնի է, նորին բարձր գերազանցութիւնը շրջագայութեան էր դուրս եկել Թուրքեստանեան երկրի իրան ենթակայ զինուորական հաստատութիւնների դրութեան հետ ծանօթանալու: Մինիստրը Պետերբուրգից Օրէնբուրգի վրայով ժամանելով Տաշքէնդ, այցելել է Միջին-Ասիական երկաթուղագծի վրա գտնվող նշանաւոր քաղաքները և վայրերը, ամեն տեղ էլ հանդիպելով բազմացեղ ազգաբնակութեան ընդունելութեան:

Ցերեկվայ ժամը 3-ից Ղզըլ-Արվատ կայարանը, զարդարված դրօշակներով, բռնկում է կենդանութիւն ստանալ հետզհետէ խռնող բոլոր ազգի հասարակութիւնից: Ժամը 4-ին հասաւ սովորական պօստատար-մարդատար գնացքը և կէս ժամից յետոյ մեկնեց դէպի Կրասնովօդսկ, որից կէս ժամ յետոյ կայարանի զանգը ազդարարեց մինիստրի արտակարգ գնացքի մօտենալը Ասխաբադից:

Այդ միջոցին կայարանի պլատֆօրման ծածկվեց թեքինական գեղեցիկ գորգերով և առանձին հասարակութիւններ՝ ռուս, հայ, թիւրքմէն և պարսիկ՝ սկսեցին բռնել իրանց յատկացված տեղերը:

Երեկոյեան ժամը 5-ին արտակարգ գնացքը դանդաղօրէն մօտեցաւ կայարանին:

Զինուորական մինիստր գեներալ Սուխօմլինով, դուրս գալով վագօնից ուղեկցութեամբ Թուրքեստանի գեներալ-նահանգապետ գեներալ Սամսօնովի, Անդրկասպեան շրջանի կառավարիչ գեն.-լէյտ. Շօստակի և այլ բազմաթիւ պաշտօնեաների, մօտեցաւ ներկայացող հասարակութիւններին:

Մինիստրը նախ ընդունեց զեկուցում տեղական պաշտօնեաներից և երկաթուղական դէպօյի գլխաւորից, ապա մօտեցաւ ռուս հասարակութեանը, լսեց ողջոյնի խօսքեր և ընդունեց աղ ու հաց:

Դրանից յետոյ մինիստրը մօտեցաւ հայ հասարակութեանը, որի կողմից ծխական դպրոցի ուսուցիչը, մատուցելով աղ ու հաց, արտասանեց հետևեալ ողջոյնի խօսքերը.

«Ձերդ բարձր գերազանցութիւն.

«Տեղական հայ հասարակութիւնը մատուցանելով ձեզ, ըստ հնաւանդ սովորութեան, աղ ու հաց, սրտագին ողջունում է ձեր բարձր գերազանցութեան՝ մեր Օգոստափառ Միապետի ներկայացուցչի բարեյաջող ժամանումը մեր քաղաքը:

«Հայ ազգը, որի մի փոքրիկ մասը ապրում է այս երկրում, իբրև հնագոյն քրիստոնեայ ժողովուրդ, միշտ հետևում է Մեծ-Վարդապետի այն պատուէրին, որը մեզ սովորեցնում է «տալ Կայսրինը Կայսրին և Աստուծունը Աստուծոյ»:

«Եւ ահա մատուցանելով ձեզ աղ ու հաց, խոնարհաբար խնդրում ենք ընդունել մեր ամենահպատակ զգացմունքները և անսահման յարգանքները»:

Մինիստրը շնորհակալութիւն յայտնելով ընդունեց աղ ու հացը և հարցրեց, թէ որքան հայ կայ այստեղ: Ստանալով գոհացուցիչ պատասխան, նորին գերազանցութիւնը անցաւ թիւրքմէնների և պարսիկների կողմը, որոնցից նոյնպէս ընդունեց աղ ու հաց: Մինիստրին առանձին ուրախութիւն պատճառեց մի թիւրքմէն երիտասարդի ռուսերէն լեզուով ողջոյն թօթովելը և ձեռքը դնելով նրա ուսին հարցրեց, թէ որտեղ է սովորել ռուսերէն խօսել, քանի «կիբիտկա» ունենն այստեղ, լաւ ձիեր պահում են և այլն. և ապա աւելացրեց, որ ինքը Ասխաբադում ներկայ է եղել թիւրքմէնների ձիարշաւին և շատ գոհ մնացել:

Պատգամաւորների ընդունելութիւնից յետոյ նորին բարձր գերազանցութիւնը գնաց դիտելու տեղիս երկաթուղական գլխաւոր արհեստանոցը, որտեղից 20 րոպէից յետոյ վերադառնալով՝ նստեց գնացքը և «ուռա» բացագանչութիւնների տակ մեկնեց դէպի Կրասնովօդսկ:

Մինիստրը գնացքի սանդուղքի վերևում կանգնած՝ ժպիտով պատասխանում էր հասարակութեան ողջոյններին:

Մենտօր-Միրամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքան հաստատեց քաղաքագլխի օգնականի պաշտօնի մէջ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին:

◆ Պետական Դումայի անդամ Պ. Միլիւկովը, իր դասախօսութիւնները աջողութեամբ կարդալուց յետոյ Բաքւում, այս օրերս Թիֆլիս կը ժամանէ:

◆ Պ. Միլիւկովը Թիֆլիս գալով անձամբ կը միջնորդէ Կովկասի Փոխարքայի առաջ, որպէսզի իրան թոյլ տրվի Թիֆլիսումն էլ դասախօսութիւններ կարդալ:

◆ Մենք ստացանք Խարկովից հետևեալ հեռագիրը ապրիլի 2-ից. «Խարկովի կայսերական համալսարանի հայ ուսանողների երկրացիութեան գործունէութիւնը դադաընցված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան շրջաբերականով։ «Հորիզոն» լրագրի № 59-ում տպված «Հայկական երեկոյթը Խարկովում» վերնագրով Համալեանի յօդուածը հանդիսանում է զրպարտութիւն, պրովօկացիայի գունաւորմամբ։ Խնդրում ենք հաղորդել ձեր աշխատակից (?) Համալեանին մեր կոչը՝ միջնորդ դատարանի երկու շաբաթվայ ժամանակամիջոցում։ „Հայկական երկրացիութեան նախկին անդամների լիազօրութեամբ՝ Նազարէթեան, Պապիկեան։ Խարկով, Բժշկական կորպուս»։ Ինչպէս երևում է, այս հեռագիրը սխալմամբ «Մշակին» է ուղղված, քանի որ Համալեանը «Մշակի» Թղթակից երբէք չէ եղել։

◆ Կիրակի, ապրիլի 1-ին կայացաւ այն առանձին մասնաժողովի նիստը, որը պաշտօն ունի Կուր գետի վրա, Վերայի պարկից վերև ոտքով երթևեկողների համար կամուրջ շինել։ Բագուի գործարաններից մէկը համաձայնել է այդ կամուրջի կառուցումը իր վրա վերցնել, պայման դնելով, որ կամուրջի ծախքը իրան վճարվի 5—6 տարվայ ընթացքում մաս-մաս։ Քաղաքային ինժեներ Ի. Կօզնովսկին յանձնարարված է մէկ շաբաթվայ ընթացքում ներկայացնել մասնաժողովին նոր նախագիծ կամուրջի կառուցման համար։

◆ Կիրակի, ապրիլի 1-ին փակված Թիֆլիսի Թռչնապահական ցուցահանդէսին այցելել են 2000 մարդ, տալով մուտքի համար սահմանված վճարը։ 1500 հոգի էլ մուտք են ունեցել ձրիաբար, գլխաւորապէս դպրոցականներից։

◆ Հայուհեաց «Մեղու» աշխատանքի տան վարչութիւնը Զատկական տօների առիթով յօգուտ չքաւոր աշակերտուհիների ստացել է հետևեալ նուիրաբերութիւնները. Գ. Կուզանեանից 25 ր., տ. Զարթեղեանի միջոցով տ. Կաճկաճեանից 3 ր, տ. Շահպարոնեանից, Օրդուխանեանից և Բաչխաչվիլից 2-ական ր., մի ոմնից 1 ր.։ Նոյն ընկեր. վարչութիւնը ստացել է Յ. Քամոյեանից ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու՝ 367 ր.։

◆ Մարտի 1-ից մինչև 31-ը Կ. Հ. Բ. Ընկ. ընթերցարանն են յաճախել 3835 հոգի, որից 2267-ը արական, իսկ 1568-ը իգական սեռից։ Գրադարանի բաժանորդներին տրված է տանը կարդալու համար 1933 գիրք, որից 1225-ը հայերէն, իսկ 708-ը ռուսերէն։ Ընթերցարանում կարդալու համար տրված է 369 գիրք, որից 225-ը հայերէն, իսկ 144-ը ռուսերէն։

◆ Դատաստանական պալատում ապրիլի 2-ին սենատի հրահանգով կրկին անգամ քննվեց Ամիրխան-Աղա-Սուլթանովի և Շամշի-Միրզա-օղլիի գործը։ Սրանք մեղադրըվում էին 1905 թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Բորչալուի գաւառում Դաւիթ և Ստեփան Միրզոյեանների կալուածքների վրա յարձակում գործելու դըրդիչ լինելու գործով, որի ժամանակ տարվել են ոչխարի հօտը և կալուածքների մէջ եղած իրերը, կրակի մատնելով անշարժ ինչքը։ Պալատը որոշեց յօգուտ Դաւիթ Միրզոյեանի երկու մեղադրեալներից գանձել 10,000 ռուբլի, իսկ Ստեփան Միրզոյեանի դրամական պահանջը մերժել։ Պէտք յիշել, որ Թիֆլիսի Նահանգական դատարանը մեղադրեալներից Սուլթանովին դատապարտել էր 8 ամսով բանտարկութեան, զրկելով իրաւունքներից, իսկ Շամշի-Միրզա-օղլիին երկու ամսով բանտարգելութեան։

◆ Վերջերս Թիֆլիսի փողոցներում յաճախակի են դարձել փողոցային շներին թունաւորելու դէպքերը, որպիսի երևոյթը քաղաքացիների և մասնաւորապէս դպրոցական աշակերտների վրա շատ ճնշող տըպաւորութիւն են գործում, որովհետև խեղճ կենդանիները տանջանքներով սատակում են անցուդարձ անողների աչքի առաջ։

◆ Օրենբուրգի գեմստվօյի գլխաւոր Ալէքսէյ Բօգատկօն Գանձակ գալով ինքն իրան թունաւորել է։ Մահվան պատճառը 13,500 ռուբլի պետական գումարի կորցնելն է։

◆ Քաղաքային վարչութեան առաջ միջնորդութիւն է յարուցված, որպէս զի Ծղնէթսկայա և Կախէթինսկայա փողոցների վրա գործող տրամվայ գիծը երկարացվի առաջինը մինչև Վակէ, իսկ երկրորդը մինչև նոր սպանդանոցը։

◆ Մօտ ժամանակներս Թիֆլիսի երկաթուղու կայարանի ապրանքային մասը առմիշտ կը տեղափոխվի Նաւթլուղ կայարանը։

◆ Յունվարի 1-ից մինչև մարտի 1-ը պետական բանկի Թիֆլիսի գրասենեակն է մուծված Քութայիսի նահանգապետի կողմից 1,225 ր. 83 կ. գումար, որպիսի դրամը նուիրաբերել են այլ և այլ անձինք յօգուտ կովկասեան համալսարանի ֆոնդի։ Այդ նահանգից ընդամենը ստացվել է 33,658 ր. 19 կ.։

◆ Կիրակի, ապրիլի 8-ին, Թիֆլիսի հասարակական ակումբը (Բօրսայի դահլիճ) կազմակերպում է երկրորդ էքսկուրսիան դէպի Շավնաբադ, որովհետև առաջին էքսկուրսիայում ցանկացողներից շատերը մասնակցել չը կարողացան վատ օդի պատճառով։ Հաւաքատեղին է Վօրօնցօվի արձանի մօտը, առաւօտեան $9^1/_2$ ժամին։

◆ Ապրիլի 6-ին ջութակահար Բ. Հուբերմանի մասնակցութեամբ և ղեկավարութեամբ Զ. Պալիևի «Նոր-ակումբում» կը տրվի սիմֆօնիական համերգ։ Ծրագրի մէջ մտնում են նաև Բեթհովենի և Բրամսի կտորներից։

◆ Ապրիլի 2-ին, ցերեկ. ժամը $11^1/_2$-ին քաղաքապահ ոստիկան Ստեփան Բելենկին, 31 տ., ուրիշ ոստիկանների հետ ուղեկցելով մի քանի կալանաւորների, յանկարծակի ուշաթափ լինելով գետին ընկաւ և՝ տարվելով Միքայէլեան հիւանդանոց՝ վախճանվեց։

◆ Ապրիլի 2-ին երաժիշտ Կոնստանդին Ցեմկօն արբած դրութեան մէջ կախվել ուզեց, սակայն ոստիկանից նկատվելով, չը կարողացաւ իր մտադրութիւնը ի կատար ածել։ Նոյն օրը դոնապան Ստանիսլավ Պազուկասը, 55 տարեկան, ինքն իրան կախեց։ Երկուսի էլ ինքնասպանութեան պատճառները յայտնի չեն։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է յօգուտ դպրոցական ուսուցչական ֆօնդի «Եղբ. Միրզոյեաններ և ընկ.» նաւթարդիւնաբերական վարչութիւնից 500 ռուբլի, I փոխ. վարկի ընկերութեան վարչութիւնից 300 ր.։

◆ Բագուի վրաց գաղութը այս օրերս կազմակերպել է Ակակի Ծերեթելիի «Պատարա Կախի» պիէսի ներկայացումը, որին ներկայ է եղել նաև ինքը հեղինակը։

◆ Այս օրերս Բագու կը ժամանէ Պետական երկրորդ Դումայի նախագահ Ֆ. Գօլօվինը, որին Բագուի քաղաքային ինքնավարութիւնը առաջարկել է քաղաքագլխի պաշտօնը ստանձնել։ Բագու գալով նա մըտադիր է քաղաքային գործերի հետ ծանօթանալ և ըստ այնմ վերջնականապէս որոշել քաղաքագլխի պաշտօնի ընդունել-չընդունելու հարցը։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Մարդ ինչքան նամակ է գրում տարվայ ընթացքում.—Միւս ժողովուրդներից ամենից շատ նամակ են գրում կըղզիացիները՝ ամերիկացիք, աւստրալիացիք ու անգլիացիք։ Իւրաքանչիւր ամերիկացու տարին ընկնում է 10 նամակ, աւստրալիացու՝ 6 և անգլիացու՝ 5։ Իւրաքանչիւր գերմանացի ու ֆրանսիացի՝ տարին գրում է 4 նամակ։ Իսկ իւրաքանչիւր ռուսի բաժին է ընկնում միայն $^1/_3$ նամակ, ապացոյց՝ որ ռուսների միջև շատ քիչ կան գրագէտներ։

◆ Անգլիական փոքրիկ պրինցների դաստիարակութիւնը.—Անգլիական Թագուհի Մերին ամբողջապէս ինքն է կառավարում իր մանուկներին, ինքն է ընտրում ուսուցիչներ, որոնք պէտք է հետևեն Թագուհու մշակած սիստեմին։ Թագուհու կարծիքով՝ ծնողների առաջին հոգսը պէտք է լինի մանուկների ֆիզիկական զարգացումըն ու առողջութիւնը, և այս պատճառով անգլիական բոլոր հինգ պրինցները դաստիարակվել են թարմ օդում՝ այս խօսքերի բուն մտքով։ Իւրաքանչիւր ամիս դաստիարակները և ուսուցիչները մանրամասն հաշիւ են տալիս Թագուհուն, որ ինքն է հարցաքննում, լինելով մեծ կրթութեան տէր։ Փոքրիկ պրինցները սովորաբար լինում են Լոնդոնի կենդանաբանական պարտէզում, իբրև պարզ այցելուներ, վճարելով մուտքի գինը։ Հագնված են շատ համեստ, բայց անպատճառ՝ անգլիական արտադրոյթի։ Հոգատար մայրը գտել է շատ պարզ ու սրամիտ միջոց՝ իմանալու միշտ, թէ ի՛նչ են անում իր զաւակները։ Դրա համար նա շինել է տուել կինեմատօգրաֆիկ ապպարատ ու լուսանկար։ Եթէ Թագուհին հեռանում է մանուկներից, նամակի փոխանակ, նրան ուղարկում են մի ժապաւէն, և էկրանի վրա նա տեսնում է, թէ ինչ են արել իր սիրելիները ամբողջ օրը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Մեռուժանի» ներկայացումը

Երկուշաբթի, ապրիլի 2-ին, վրաց Թատրոնում Ամօ-Խարազեանը և մի խումբ մարդիկ, որոնց մէջ Թիւրիմացութեամբ, մեզ համար անհասկանալի պատճառներով, ընկել էր դերասան Գ. Միրազեանը, ներկայացրին» Ս. Հախվերդեանի «Մեռուժան» (իմա «Մեհրուժան») 5 գործ. «պատմական նոր պիէսը», մասնակցութեամբ «զօրքի», «ժողովրդի» և «պարող կանանց», որոնք ի մէջի այլոց Թառի և Նագարայի նուագակցութեամբ, Արիաց արքայ Շապուհի ժամանակ, գնչու կանանց հագուստով պճնված՝ մի լաւ էլ «Ուզունդարա» կոչված պարը պարեցին, ծափահարվելով համրեա Թէ դատարկ դահլիճում նստած մի քանի հանդիսականներից։ Չը մոռանանք յիշել, որ Արծրունեաց տան տիկինը, Մեհրուժանի մայրը Օֆէլիայի (Համլէտ—Շէքսպիր) հագուստն էր հագել, փոքրիկ խաչը կրծքին և խոպոպիկները Թիկունքի վրա տարածած։ Ի դէպ ասենք, որ Մեհրուժանի մօր դերը կատարող օրիորդին կամ տիկնոջը անկեղծ խորհուրդ կը տանք այլևս դուրս չը գալ «Մեռուժան» կոչված «նոր պատմական պիէսների» նման «ողբերգութիւնների» մէջ, քանի որ մենք նրանում աւելի խոշոր ձիրք և ընդունակութիւններ տեսանք և եթէ նա լուրջ կերպով պարապվի և բեմական արուեստը լաւ ուսումնասիրէ, կարող է մեր բեմի լաւ ույժերից մէկը լինել։ Իսկ ինչ կը վերաբերի «նոր պատմական ողբերգութեանը»... Բայց աւելի լաւ է այդ մասին չը խօսել։ Մենք համբերութիւն ունեցանք «ողբերգութեան» միայն երեք գործողութիւնները տեսնելու. իսկ թէ ինչ եղաւ յետոյ, չը գիտենք... Երրորդ գործողութիւնը վերջացաւ գիշերվայ ժամը 11 և կէսին։

Թատերասէր.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 3 ապրիլի

Հրաժարվելով, համաձայն հանգուցեալ դրամատուրգ Գաբրիէլ Նիկիտիչ Սունդուկեանի վերջին կամքի, նրա աճիւնները պսակով զարդարելուց, Վրաց Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի ուղարկել ձեր յարգելի լրագրի խմբագրութեանը յիսուն ռուբլի (50 ր.) գործադրելու Գ. Սունդուկեանի անունով հիմնելիք ֆօնդին կամ սրա հերոս Պէպոյի արձանի կառուցման համար, ըստ ձեր հայեցողութեան։

Վրաց Դրամատիկ. Ընկ. վարչութիւն.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ամերիկահայ Ուս. Միութիւնը որոշած ըլլալով հանդիսաւորապէս տօնել հայ տպագրութեան 400-ամեակը՝ ընտրած է յանձնախումբ մը, որ ներկայիս կուգայ ծանուցանել ամերիկահայ յարգոյ հասարակութեան, թէ հարկ եղած նախնական քայլերն առնուած են այդ մասին, ու մօտ օրէն վերջնական կարգադրութիւնները կը լրանան և հայ մամուլի միջոցաւ կը հրապարակուին։

Սակայն նկատելով դէպքին պատմական կարևորութիւնն ու ազգային հանգամանքը, Յանձնաժողովս անհրաժեշտ դատեց այժմէն իսկ դիմել հանրային աջակցութեան, արժանաւոր կերպով կատարելու համար մըտադրուած հանդէսը։ Ուստի հրապարակաւ կը խնդրենք ամերիկահայ մամուլի ներկայացուցիչներէ, հայ տպագրիչներէ և հրատարակիչներէ, հեղինակ-մատենագիրներէ, մտաւորականներէ, ինչպէս նաև ամբողջ հայ ժողովուրդէն, որ իրենց հովանաւորութիւնն ու օժանդակութիւնը շնորհեն Ուս. Միութեան սոյն ազգօգուտ ձեռնարկին, և ամբողջ ամերիկահայը մէկ կամ միւս կերպով մասնակցի տօնախմբութիւնը համազգային ընելու։

Կուզենք այս առթիւ մասնաւոր կերպով շեշտել, թէ հանդէսի կարևորագոյն մասերէն մին պիտի ըլլայ ցուցադրութիւնը ամերիկահայ տպագրական գործերու, իրական գաղափար մը տալու համար հայ տըպագրութեան անցեալ ու ներկայ վիճակին ու արդիւնքներուն նկատմամբ, ու մանաւանդ տեսնելու անոր զարգացման քայլերը։

Հետևաբար պիտի խնդրենք հայ մամուլէն, հրատարակիչներէ, տպագրիչներէ, գրավաճառներէ և ամեն գրասէր հայերէ, որ եթէ ունին իրենց ձեռքին տակ Ամերիկայի ոևէ մէկ քաղաքին մէջ տպուած հայերէն գրքերու, թերթերու, յայտագիրներու, թուցիկներու, հրաւիրագրերու, տոմսակներու և այլն, և այլն նմոյշներ, հաճին մեզի ղրկել զանոնք ստորև դրուած հասցէով, անոնց վրայ նշանակելով տպագրութեան տեղն ու թուականը և տպագրիչին անունը, եթէ ծանօթ են, ինչպէս նաև ղրկողին անունն ու հասցէն։ Անոնք որ իրենց նմոյշները ետ ստանալ կուզեն, թող վրան նշանակեն «վերադարձուլ», և իրենց ետ կը ղրկուին՝ հանդէսը լրանալէ ետք։

Հանդէսը տեղի պիտի ունենայ Բօստոնի մէջ, ուսանողներու տարեկան համագումար ժողովին երրորդ օրը, 23 յունիս 1912։ Ձեռնհաս և մասնագէտ անձերու կողմէ բանախօսութիւններ տեղի պիտի ունենան հետևեալ նիւթերուն վրայ. 1) Հայ տպագրութեան ծագումն ու զարգացումը. 2) Տպագրութիւնը ամերիկահայոց մէջ. 3) Հայ գիրերն ու անոնց գործածութիւնը տպագրութենէն առաջ. 4) Արդի տպագրական արհեստը իբր քաղաքակրթական ազդակ։

Մասնաւոր հրաւէր ղրկուած է ամերիկահայ մամուլին և կրթասիրական ընկերութիւններու, որ գործօն դեր ունենան հանդէսը իր անունին արժանի տօնախմբութիւն մը ընելու։ Պիտի հրաւիրուին նաև օտար մամուլի ներկայացուցիչներ և այլևայլ դասակարգի պատկանող հայ ազգայիններ իրենց մասնակցութիւնը բերելու։

Յանձնախումբս շատ ուրախ պիտի ըլլայ ընդունելու ոևէ թելադրութիւն ծրագրուած 400-ամեակը աւելի ճոխ և միանգամայն օգտակար կերպով տօնելու։ Գործի կանոնաւորութեան սատարած ըլլալու համար կը խնդրենք որ ամեն տեսակ տպագրական նիւթեր ղրկուին առ A. H. CHAMICHIAN, P. O. Box 111, Cambridge, Mass.

Իսկ թղթակցութիւններ և թելադրութիւններ ղրկուին առ The ARMENIAN STUDEHTS ASSO. Centennial Committee. T. C. Box 187, Colubia University. New York City.

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
Հայ Տպգր. Չորսհարիւրամեակի
Ա. Ո. Միութեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Շուտով Իզվօլսկին Պարիզից գալու է Պետերբուրգ, որպէսզի տեղնուտեղը պարզէ, թէ ինչ վերաբերմունք ունեն Պետերբուրգի ղեկավար մարմինները դէպի Մերձաւոր-Արևելքի բարդ դրութիւնը, ինչպէս նաև ծանօթացնէ Պետերբուրգին ֆրանսիական կառավարութեան հայեացքների հետ այդ խնդրի նկատմամբ։

◆ Վիէննայի «Zeit» լրագիրը տպագրում է յուզիչ հեռագիրներ Կ. Պօլսից, երբ զինված ընդհարման սպառնալիք կայ Ռուսաստանի և Թիւրքիայի միջև։ Լրագրի ասելով երկու կողմից ևս տեսնվում են մի շարք պատերազմական պատրաստութիւններ։

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնից հերքվում են «Zeit»-ի հաղորդած սենսացիօն լուրերը։

◆ Թիւրքական դիպլոմատիական շրջանները նոյնպէս աւստրիական լրագրի հաղորդած տեղեկութիւնները գըտնում են անհիմն։

◆ Պետերբուրգի դիպլոմատիական շրջաններում հաւատացնում են, որ շուտով Իտալիայի և Թիւրքիայի միջև պատերազմական գործողութիւնները դադարելու են, որովհետև զգալի փոփոխութիւն է տեղի ունեցել Թիւրքաց ղեկավար շրջանների տրամադրութեան մէջ։ Այդ փոփոխութիւնից օգտվելու է ամենից առաջ գերմանական դիպլոմատիան այնպիսի կօմպրոմիս մշակելու, որպիսին հաւասարապէս ընդունելի լինի թէ Հռոմի և թէ Կ. Պօլսի համար։

◆ Չինաստանի ապստամբ վայրերում տիրում է սոսկալի կացութիւն։ Իրերի տէրերն են ապստամբ զօրամասերը, որոնք սրի են քաշում իրանց հրամանատարներին։ Առանձնապէս դըրութիւնը վատթար է Խանկօուի և Ուչանի շրջանում։ Իւանշիկայի կարգադրութեամբ վեցերորդ զօրաբանակը, որ բաղկացած է անհամեմատ հաւատարիմ զինուորներից, բանակ է դրել Պէկին-Խանկօու երկաթուղու գծի շուրջը։

◆ Պարիզում վերջերս տեղի ունեցած երկու յանդուգն դրամաշորթութեան առիթով ոստիկանութիւնը որոնում է յայտնի անիշխանական ոմն Նակօմիձէին։

◆ Շվէյցարիայում կալանաւորվեց միացեալ բանկի Լեբեդինի բաժանմունքի նախկին կառավարիչ յայտնի աֆերիստ Զիլբերշտէյնը, որ կեղծ թղթերով զանազան ժամանակ և զանազան բանկերից կարողացել էր ստանալ 300,000 ռուբլուց աւելի։ Վերջերս յիշեալ աֆերիստը կեղծ անցագրով ապրում էր արտասահմանում։

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ փաստաբան Մակլակովը վճռաբեկ գանգատ ներկայացրեց սենատին «Баку»-ի խմբագիր Քր. Վերմիշեանի դատավճռի դէմ։

◆ Վլադիմիրում ոստիկանական մի ուժեղ խումբ խուզարկութիւն կատարեց տեղական կոյրերի դպրոցն ու ապաստան վեց կոյրերի մօտ, որոնցից, սակայն, ոչ մէկը չարժանացաւ ձերբակալութեան...

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը հերքում է Թեհրանի ռուսաց գեներալ հիւպատոս Պօխիտօնովի հրաժարականի լուրերը։

◆ Կառավարութիւնը թոյլ չը տուեց գումարել սահմ.-ռամկավարների կուսակցութեան համագումար Դումայի ընտրութիւնների առիթով։

◆ Այս ապրիլի 10-ին կառավարիչ սենատի առաջին ու վճռաբեկ դեպարտամենտների միացեալ ատեանում քննվելու է սենատի առանձին ատեանի առաջադրութիւնը, որ սենատոր Կրիվցովի նախագահութեամբ քննեց «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամների գործը, այն վաւերագրերի կորստեան մասին, որ երևան հանվեց յիշեալ դատավարութեան ժամանակ, հանդերձ նախնական քննութեան օրերում կատարված բազմաթիւ խարդախութիւններ։ Այդ խարդախութիւնների և վաւերագրերի կորստեան նախնական քննութիւնը, որ արդարադատութեան մինիստրի կարգադրութեամբ կատարեց կարևորագոյն գործերի քննիչ Ալէքսանդրովը, արդէն աւարտված է, և այժմ Ալէքսանդրովը զբաղված է պատճառաբանեալ գրութիւնը կազմելով, որ քննութեան նիւթերի ու էկսպերտների փաստերի հետ միասին այս երկու օրս կը ներկայացվի սենատին։ Արժանահաւատ աղբիւրներից «Бирж. Вѣд.»-ն հաղորդում է, որ Ալէքսանդրովի քննութիւնը երևան է հանել ինչպէս կեղծիքների բոլոր նշանները, այնպէս և փաստաթղթերի կորստեան իրողութիւնը։ Լրագրի ասելով, բացի Դաշնակցութեան գործի նախնական քննութիւնը կատարած Լըժինից՝ 303-դ և 362-րդ յօդուածներով դատվելու են նաև ուրիշ մի քանի անձեր։

◆ Լոյս մարտի 30-ի գիշերը Պետերբուրգում տեղի ունեցան 25 ինքնասպանութեան փորձեր։

◆ Բեռլինի մամուլը հաղորդում է, որ վերջերս Գերմանիայում սաստկացել է մանկահասակների ինքնասպանութիւնը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

2 ապրիլի

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ։ Ջիւնախառն փոթորիկ էր։ Ջուրը Վօլգայի և Օկայի վրա բարձրացել է համարեա 9 արշին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Խորհուրդն ընդունեց բոլոր երեք օրինագծերը Աստրախանի, Օրէնբուրգի և Ստաւրօպօլի նահանգներում զեմստվօ մտցնելու մասին։ Բոլոր ուղղումները զեմստվոյին ձայնաւորների ցենզը պակասեցնելու մասին մերժվեցին։ Օրինագծերը յանձնվում են համաձայնեցուցիչ մասնաժողովին։

ԿԻՍԼՕՎՕԴՍԿ։ Վախճանվեց Պետերբուրգի նախկին քաղաքագլուխ սենատոր Ռատկով-Ռօժնովը։

ՇԼԻՍԵԼԲՈՒՐԳ։ Նէվա գետի ջուրը դուրս գալով ափերից ծածկել է 47 վերստ տարածութիւն։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Նաւագնացութիւնը բացվեց։

«Սալամանդրա» գործարանից գործադուլի պատճառով արձակվեցին 550 բանուոր։

ՁԱԳՐԷԲ։ Բանտում ծանր հիւանդացաւ սերբ-խորվատական կօալիցիայի պարագլուխ Լօրկօվիչը։

ՏՕԿԻՕ։ Խակօդատում հրդեհը ոչնչացրել է 733 տուն։ Հրդեհների մասին հաղորդում են Օսաքից և Կուբիսակից, ուր այրվել են 240 տուն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Մաղրասա, Հայրենակցին.—Ոչ մէկը չենք ստացել։ Սրանից առաջ գրել էք մեզ՝ հարցնել տեղիս պօստատանը և եթէ այստեղ ստացված են, ապա ընդունելը։ Հարցրինք, բայց բացասական պատասխան ստացանք։ Երևի՝ կորել են։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԳՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՍՐՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Ձ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—31

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վէլեամինովսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—93

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.
(Հ.ու.Կ.) 761. 100—95

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցարսկիէ-Կօլօդցի համար հարկաւոր է
◆ ՔԱՀԱՆԱՅ կամ ՔԱՀԱՆԱՑՈՒ, ◆
որը պէտք է լինի և միակ ուսուցիչ ծխական դպրոցում, աւանդելով միդասեան դպրոցի բոլոր առարկաները։ Աշակերտների թիւն է 20։ Ռոճիկ՝ ուսուցչութեան համար 360 ր., քահանայական արդիւնք մօտ 240 ր. տարեկան, բնակարան և վառելափայտ։
Դիմել՝ Царскіе-Колодцы (Тифл. губ.), Армянскому Приходскому Попечительству.
(օ.մ.) 216. 3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿՆԻԿԱՐՄԱՏԻ ՇԱԼՎԱՐԸ
ԿԱՄ ՄՕԴՆԻ ԻՒԲԿԷՆ վօդևիլը
հեղինակութիւն Ա. ԽՈՍԵԵԱՆԻ, գինը 20 կոպ.։ Ծախվում է Թիֆլիսում «Գուտենբերգ», «Կենտրոնական», «Գիր», «Կովկասեան» և «Նոր-Կեանք» գրախանութներում և հեղինակի մօտ՝ Թիֆլիս, Семеновская ул. № 9. Ինձ դիմողները ուղարկեն նաև 15 կոպ. փօստային կա ճանապարհի և այլ ծախսերի համար։ [illegible] գնողներին հեղինակն անում է 30—50 հատին 25% զեղչ, 50—100 հատին 35% զեղչ, 100-ից բարձր 45%։ Ուղարկվում է նալօժով (անպայման ուղարկել կանխավճար)։ Ծախվում է նաև «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան», նկարներով ու ռեցեպտներով, գինը 50 կոպ.։ 181. 10—4
(Հ. Կ.)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.